

Ս. Սարգիս Զորավարի տօն



Փետրուար 12-ին Հայաստանի մէջ նշուեցաւ Ս. Սարգիս Զորավարի տօնը: Նախագահ Սերժ Սարգսեան Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ Արարատեան հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ մասնակցեցաւ Ս. Սարգիս զորավարի տօնին նուիրուած եկեղեցական արարողութեան: Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի տնօրինութեամբ Երիտասարդներու օրհնութեան օր հռչակուած է Ս. Սարգիսի տօնը:

Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց Հայաստանի Հանրապետութեան դեսպանատուն



Կարդալ էջ 7

«Ինքնանպատակ դաշինքներ կազմելու խնդիր չունինք» Կ'ըսէ Արմէն Ռուստամեան



Կարդալ էջ 5

«Թուրքիոյ պատմութեան նաեւ մաս կը կազմէ 1915-ի ցեղասպանութիւնը» «Հորիզոն»-ի հարցազրոյցը Գերմանիոյ Կանաչներու կուսակցութեան համանախագահ Ճեմ Էօզտեմիրի հետ



Կարդալ էջ 4

2017
HR-V
 STARTING FROM
\$20,950*

HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
 Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
 www.hondagabriel.com
 < OPEN SATURDAYS >

Kevoork Asadourian
 Vahan Vartanian

HONDA

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

2425 boul. Curé-Labelle,
Laval, QC H7T 1R3
(450) 978-2333

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

7250 Boul. Des Roseraies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul. Des Sources,
Roxboro, QC H8Y 3C5
(514) 685-5050

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(514) 904-6789

2655 ave. des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

225 Rue Peel
Montréal, QC H3C2G6
(514) 905-6499

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

20 Ashtonbee Road
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

www.groupeadonis.ca

Suivez-nous !





Հ.Յ.Դ. ՄԻՇՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

ՎԱԹՍՈՒՆ ԱՄԵԱՅ ԵՐԹԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՄԻՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Նուիրում՝
ՀՅԴ Միհրան Փափազեան Կոմիտեի
Հիմնադրութեան 60-ամեակին

25 Մարտ 2017
Բաստրմաճեան Սրահ, Մոնթրէալ

ՕՐԱԿԱՐԳ

- | | |
|-------------|--|
| 12:15-12:45 | Արձանագրութիւն եւ Ընդունելութիւն |
| 12:45-1:00 | Բացման խօսք |
| 1:05-1:30 | ՀՅԴ - Ընկերվար Միջազգային Կառոյց եւ Գանատա |
| 1:30-1:55 | Հարց-պատասխան |
| 1:55-2:05 | Դադար |
| 2:05-2:30 | ՀՅԴ Մամուլի դերը, քաղաքական հասարակութիւնը |
| 2:30-2:55 | եւ Հասարակական Կարծիքը |
| 2:30-2:55 | Կլոր սեղան |
| 2:55-3:05 | Դադար |
| 3:05-3:30 | «Վաթսունամեայ Երթը կը շարունակուի» |
| 3:30-3:55 | Երիտասարդական Քննարկում |
| 3:55-4:15 | Խորհրդածողովի ամփոփում եւ փակման խօսք |

Մանրամասնութիւններ յաջորդ յայտարարութեամբ:

«Թուրքիոյ պատմութեան Գառն մաս կը կազմէ 1915-ի Հայոց Ցեղասպանութիւնը»

«Հորիզոն»-ի Հարցազրոյցը Ճեմ Էօզտեմիրի Հետ

Յունուար 21-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնին մէջ կայացած Հրանդ Տիմֆի սպանութեան 10-ամեակի ոգեկոչման հանդիսութեան նախօրեակին, «Հորիզոն» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Վահագն Գարագաշեան հետեւալ հարցազրոյցը ունեցաւ Գերմանիոյ Կանաչներու կուսակցութեան համանախագահ Ճեմ Էօզտեմիրի հետ, որ օրուան գլխաւոր պատգամաբերն էր:

«Հ» - Պրն. Էօզտեմիր, դուք առանցքային դերակատարութիւն ունեցաք Գերմանիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի որդեգրման մէջ: Գերմանիոյ քաղաքական ուժերը ի՞նչպէս գորակոչի ենթարկեցիք:

Ճեմ Էօզտեմիր- Շնորհակալութիւն: Սակայն անշուշտ ես առանձին չէի: Ունէինք կարեւոր դաշնակիցներ, որոնցմէ մէկը Գերմանիոյ նախագահ պրն. Կառլըն էր, որ Պունտսթայի մէջ մեր քննարկումներու առաջին օրունէն մէկ օր առաջ եկեղեցւոյ մէջ խօսք մը արտասանեց եւ օգտագործեց «ցեղասպանութիւն» եզրը, որմէ ետք մեզի համար աւելի դժուար էր այդ ուղղութեամբ ընթանալ: Նաեւ խորհրդարանի նախագահ պրն. Լամպերթը նիստի բացումի ընթացքին իր կարգին կարեւոր կէտեր նշեց դարձեալ օգտագործելով «ցեղասպանութիւն» եզրը: Ուստի քաղաքական խմբաւորումներուն համար աւելի դժուարին դարձաւ աւելի համարձակ ըլլալ քան ինչ եղած էինք նախորդող տարիներուն: Պատճառներէն մէկը այն է, որ երբ տասը տարի առաջ ցեղասպանութեան հարցին շուրջ առաջին քննարկումը կատարեցինք տակաւին գոյութիւն ունէր այն յոյսը, որ Թուրքիոյ մէջ հարցերը կ'ընթանան ճիշդ ուղղութեամբ եւ Թուրքիա կրնայ իր պատմութեան հետ առերեսուել իր ուղին գտնել: Կար ժամանակ մը, երբ Հրանդը (Տիմֆ «Հ») տակաւին ողջ էր եւ Թուրքիոյ մէջ քննարկումներ, խորհրդակցութիւններ տեղի կ'ունենային, ուստի կ'ուզէինք քաջալերել

այդ հոլովոյթը: Սակայն եթէ այսօրուան կացութիւնը դիտենք կը տեսնենք, որ կացութիւնը վատթարացած է, ուստի ժամանակն էր ճանաչելու ցեղասպանութիւնը, սակայն ոչ միայն Թուրքիան ամբաստանելու, այլ նաեւ խօսելու համար մեր պատմութեան եւ այս ահաւոր դէպքերուն մեր մասնակցութեան մասին: Ես հպարտ եմ, որ գերմանական Պունտսթայի քաղաքացիներն ունէր Գերմանիոյ յանցանքին մասին խօսելու: Որոշումին առաջին բաժինը ցեղասպանութեան մասին խօսել էր, երկրորդը՝ Գերմանիոյ յանցանքին, սակայն երրորդ բաժինը կը վերաբերէր այսօրուային նախընտան եւ տեսնելու, որ գոյութիւն ունի պարտաւորութիւն մը՝ Հայաստանը եւ Թուրքիան դարձնելու լաւ դրացիներ, ինչպէս այսօր են Գերմանիան եւ Լեհաստանը կամ Գերմանիան եւ Ֆրանսան, եւ այդ է իմ տեսլականս, որ օր մը Հայաստան-Թուրքիա սահմանը բաց կը տեսնենք, ինչպէս Գերմանիոյ եւ Ֆրանսայի միջեւ սահմանը բաց է:

«Հ» - Հայոց ցեղասպանութեան հարցը ջնջուած է բրիտանական պատմութեան գիրքերէն, Թուրքիոյ նոր սերունդները այդ վերաբերեալ բաւարար տեղեկութիւն չունին: Ձե՞՞ք կարծեք, որ ժամանակը հասած է այդ դասագիրքերը վերախմբագրելու:

Ճ. Է. - Դժբախտաբար հարցը ձեռքս չէ: Իտեալական աշխարհի մը մէջ, ուր ես ըլլալիս զայն գրող, շատ աւելի տարբեր պատկեր մը պիտի ստեղծուէր: Այդ գիրքը պիտի պատմէր պատմութիւնը այն մարդոց, որոնց պատմութիւնը թրջական պատմութեան գիրքերուն մէջ չի պատմուիր, սակայն ատիկա միայն Թուրքիոյ պարագային չէ, այլ դժբախտաբար նաեւ բազմաթիւ այլ երկրներուն մէջ: Պատմութեան գիրքերը կը գրուին կառավարութիւններու կամ դեկլարութեանց կողմէ ստեղծուելու համար «առասպել» մը, որ իսկութեան մէջ որեւէ առնչութիւն չունի իրականութեան հետ: Սովորաբար Պայագիտը «Ռեքոնքուիսիա»-

ի ժամանակ հրեաներուն օգնեց գալով Օսմանեան կայսրութեան մէջ հաստատուելու, Համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին Գերմանիայէն հրեաներու արտոնուեցաւ գալ եւ հաստատուել Թուրքիոյ մէջ, սակայն Թուրքիոյ պատմութեան նաեւ մաս կը կազմէ 1915-ի Հայոց Ցեղասպանութիւնը, 1937-1938 թուականներու Տերսիմի դէպքերը, 90-ականներու Սվազի դէպքերը, երբ այլեւիները սպանուեցան, ատոնք եւս պատմութեան մաս կը կազմեն: Աշխարհի վրայ չկայ պետութիւն մը, որ միայն լաւ դէպքերու պատմութիւն ունի, ուստի Թուրքիան չի տկարանար, եթէ այդ դէպքերը նշուին պատմութեան գիրքերուն մէջ, այլ ընդհակառակը, կը հաւատամ Թուրքիան արդիական ընկերութեան վերածման պիտի նպաստէ: Ասիկա ամբաստանելու, յանցանքի մասին չէ, այլ պատասխանատուութեան: Գերմանիոյ նախկին նախագահ Վայցեբըր առիթով մը Պունտսթայի մէջ իր արտասանած խօսքին մէջ ըսաւ, թէ Գերմանիոյ երիտասարդ սերունդը Ողջակիզման համար յանցաւոր չէ, այդ մէկը կը վերաբերի Նացի ժամանակաշրջանին, սակայն բոլոր պարտաւորութիւնն ունինք, որովհետեւ տեղի ունեցած է մեր նախահայրերու անունով՝ պարտաւորութիւնն ունինք երաշխակործուելու, որ երբեք չի կրկնուիր եւ վերապրողներու ընտանիքներուն հետ կամուրջներու հաստատման նպատակով: Եւ Թուրքիան ճիշդ այդ պէտք է ընէ: Ուստի Թուրքիոյ նոր սերունդները պարտաւորութիւնն ունին չմոռնալու անոնք, որոնք այդտեղ կ'ապրէին, եւ ի՞նչու այլեւս այդտեղ չեն ապրիր, եւ պիտի մաղթէի, որ անոնց եղբուական պատմութիւնները պատմուին թրջական պատմութեան դասագիրքերուն մէջ: Ես հոռետես մը չեմ. կը հաւատամ, որ ուշ կամ կանուխ այդ մէկը տեղի պիտի ունենայ՝ այդ մէկը պիտի տեսնենք, ինչպէս ես այսօր կը տեսնեմ. երբ կը քայլեմ Պերլինի մէջ կարգ մը տուններուն վրայ կը տեսնեմ անունները անոնց նախկին բնակիչներուն, որոնք արգելափակման

ճամբարներ ուղարկուած են: Կը մաղթեմ, որ օր մըն ալ, երբ Պոլսոյ թաղամասերուն մէջ քայլեմ, բնակարաններու վրայ տեսնեմ անունները անոնց, որոնք նախապէս այդտեղ կը բնակէին: Կը կարծեմ, որ այդ մէկը կարեւոր է, եւ մինչեւ այն ատեն, որ Թուրքիան այդ պատմութիւնը չի պատմեր, մենք զայն պէտք է պատմենք, որպէսզի չմոռուցի:

«Հ» - Ի՞նչպէս կը գնահատէք Հրանդ Տիմֆի աւանդը:

Ճ. Է. - Ան Թուրքիոյ հայ համայնքէն առաջին անձն էր, որ խօսեցաւ 1915-ի մասին եւ բազմաթիւ թրջահայերու քաջալերեց իրենց պատմութեան հետ առերեսուելու, նոյն ատեն Թուրքերը քաջալերեց իրենց պատմութեան հետ առերեսուելու: Մի մոռնաք, որ եթէ Թուրքիոյ մէջ մեծցած էք եւ թրջական դպրոց յաճախած էք՝ քու պատմութեանդ մասին ի՞նչ կը սորվիս: Կը սորվիս, թէ բոլոր պատերազմներու մէջ յաղթանակներ արձանագարած են, սակայն Օսմանեան կայսրութիւնը հետզհետէ փոքրացաւ, ուստի սորվածդ զարմանալի պատմութիւն մըն է, չես լսեր այն ժողովուրդներուն մասին, որոնք այդտեղ կ'ապրէին նախքան օսմանցիներու եւ սելճուքներու գալուստը, կարծես նախապէս երկիրը բնաւ բնակուած էր: Ուստի Հրանդը կարեւոր դերակատարութիւն ունեցաւ վերանշարժ քննարկումին սկիզբ տալու համար, որ հայերը այդ աշխարհագրական տարածքին մէջ բնակներ են: Ձինք սպաննողները, եւ խօսքս միայն այդ երիտասարդութեան մասին չէ այլ նաեւ պետութեան, կ'ուզէին Հրանդի գաղափարներուն գոյութիւնը դադարեցնել, ուստի մեր պարտաւորութիւնն է փաստել, թէ այդ մէկը անկարելի է: Բայցեւայնպէս պէտք է նշեմ, որ այն լաւատեսութիւնը, որ Հրանդը ունէր, թէ Թուրքիոյ մէջ փոփոխութիւն պիտի տեսնէ, առայժմ տեղի չէ ունեցած:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐՅՑ ՎԱՀԱԳՆ ԳԱՐԱԳԱԾԵԱՆ

HAIG AFARIAN
Cell : 514.862-6779
Bur : 514.360.3000 ext 1234
haig.afarian@gmail.com
Effectuée par
MLESARCH-ETCETES-PROTHÉCARES
Charisma FINANCE
3310 100e Avenue, bureau 350, Laval
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Clair, QC H9R 4Z7
ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

NISSAN | VÉHICULES D'OCCASION | **HONDA**
CERTIFIÉS | **GABRIEL**
Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca
7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite
AZIG Driving School
Tel: 514-336-1110
Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan
NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant
nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7
Services available
in Armenian, Arabic,
English and French

NAZARETH
CLASSIC GRILL
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644
AUTO SAMSON
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX
ՀԱՅԿ ԻՄՈՒԿՆԵԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR
MARIE-CLAIRE
CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)
2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

«Ինքնապատակ դաշինքներ կազմելու խնդիր չունինք» Կ'ըսէ Արմէն Ռուստամեան

«Չեմ կարծեր, թէ ընտրութիւններէն ետք Դաշնակցութեան առնչուած որեւէ անակնկալ փոփոխութիւն ըլլայ», «Թերթ»-ին հետ ունեցած գրոյցին ընթացքին յայտնեց ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, Ազգային ժողովի Հայ յեղափոխական դաշնակցութեան խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան՝ պատասխանելով այն հարցումին, թէ կարելի՞ է ընտրական փուլէն ետք որոշակի անակնկալ փոփոխութիւններ ըլլան եւ իշխանափոխութեան պարագային ՀՅԴ-ն ընդդիմութեան միանայ:

«Չեմ կարծեր, թէ ՀՅԴ-ին առնչուող որեւէ անակնկալ ըլլայ, որովհետեւ մենք մեր ծրագիրները ունինք, եւ եթէ որեւէ մէկը առաջարկէ միացեալ աշխատանք տանիլ այդ ծրագիրներուն համապատասխան, մենք անոնց հետ համագործակցութեան պատրաստ ենք: Այլապէս Դաշնակցութիւնը չի միտքի ինքնանպատակ դաշինքներ ու միաւորումներ հաստատելու՝ պարզապէս աթոռներ բազմացնելու եւ փառամոլութեան խնդիրներ լուծելու նպատակով», հաստատեց Ռուստամեան:

Ըստ Ռուստամեանի, ՀՅԴ-ն յաջորդ Ազգային ժողովին մէջ կարելի պիտի ընէ, որպէսզի իր սկսած աշխատանքը աւարտին հասցնէ. «Ասիկա պիտի ընենք, որպէսզի չարտօնենք, որ տարուած աշխատանքը ի գուր ըլլայ: Բնական է, որ մենք պատրաստ ենք համագործակցելու այն բոլոր ուժերուն հետ, որոնք այս մօտեցումը կը կրեն»:

ՀՅԴ-ի պատգամաւորը չ'ուզեր գուշակութիւններ կատարել, թէ արդեօք հաւանակա՞ն է երկրորդ փուլ եւս տեղի

ունենայ. «Մեր առաջադրանքը այն է, որ ապահովենք այնքան ներկայութիւն, որ այս բարեփոխումներու հողովոյթը անշրջանցելի դառնայ, ապա սրընթաց կերպով արդիւնքներ արձանագրուին, որպէսզի ժողովուրդը անոր պտուղները քաղէ, որովհետեւ մենք համոզուած կատարած ենք այս քայլը, որպէսզի երկրին մէջ տիրող դժգոհութեան պատճառները վերցունք: Ներկայիս այդ պատճառները վերցնելու հիմքերը դրած ենք, կը մնայ, որ մարդիկ անոր դրական արդիւնքները շօշափեն», ըսաւ ան:

Ըստ Ռուստամեանի, եթէ Դաշնակցութեան ներկայացուածութիւն չ'ըլլայ, այդ աշխատանքը արագ լուծում չի ստանար. «Իսկ եթէ ՀՅԴ-ն մեծ ներկայութիւն ունենայ, մեր ժողովուրդը աւելի շուտ պիտի նկատէ, որ այս բոլորը իրապէս ճիշդ էին, եւ բոլորն ալ պիտի օգտուին այս առիթէն: Անկէ ետք, հարց չ'է, թող մոռնան, թէ որո՞ւն շնորհիւ էր, որ այսպէս եղաւ, բայց ամէն պարագայի ատիկա մեր խնդիրն է»:

Ռուստամեանի համաձայն, ինքնանպատակ չ'է Դաշնակցութեան միտումը՝ Ազգային ժողովին մէջ մեծ թիւով ներկայութիւն ունենալու. «Այսօր Ազգային ժողովին մէջ ՀՅԴ-ն 5 հոգի է, բայց այնքան աշխատանք տարած է, որ 50 հոգի չ'էր ընէր: 5 հոգիով սահմանադրութիւն փոխել, ընտրական համակարգ փոխել, այսինքն՝ մէկը պատկերացուցա՞ծ է, թէ ատիկա ինչպէ՞ս կարելի էր իրականացնել: Եթէ Դաշնակցութեան նախընտրական ծրագիրը տեսնէք, անոր առնուազն մէկ գլուխը ժողովրդավարական պետութեան կայացման կը վերաբերի. անիկա գրեթէ ամբողջութեամբ իրա-

գործուած է՝ ունենալով 5 պատգամաւոր», ըսաւ ան:

Պատասխանելով այն դիտարկման, թէ որքանո՞վ վստահ են, որ այս ընտրական օրէնսգիրքը ժողովրդավարութիւն պիտի ապահովէ՝ հաշուի առնելով, որ շատ մը քաղաքական գործիչներու եւ որոշ քաղաքացիներու համար վարկանշային ցանկին տրամաբանութիւնը այդքան ալ պարզ չ'է, Արմէն Ռուստամեան նշեց, որ «կը կարծեմ, թէ վարկանշային կարգով ընտրութիւնները հետագային պիտի վերանայուին»:

«Այստեղի խնդիրը այն է, որ վարկանշային համակարգը վստահ ընտրութիւններէն ետք վերատեսուցութեան պիտի ենթարկուի, որովհետեւ այստեղ կան որոշ հարցեր, ուր բացթողումներ կան, եւ հասկնալի է, որ ճիշդ չ'է այս ձեւը կիրարկել: Բայց եւ այնպէս ասիկա բոլորին համար նոյն ձեւն է», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ մտավախութիւն չ'կա՞յ, որ այս հողովոյթը վերահսկողութենէն դուրս ելլէ, Ռուստամեան ըսաւ. «Չէ, եթէ մեր վերահսկողութենէն դուրս ելլէ, ուրեմն բոլորին վերահսկողութենէն դուրս ելած կ'ըլլայ, հետեւաբար այդ առումով վստահ չ'ըլլար, որովհետեւ բոլորին մօտ հաւասար իրավիճակ կը տիրէ»:

«Սակայն նախնական մեկնարկային պայմանները բնականաբար նոյնը չ'են, որովհետեւ ասկէ առաւելաբար իշխանութիւնը կրնայ օգտուել, որովհետեւ աւելի շատ վարկանշային կարգով ընտրուած մարդ կրնայ ունենալ: Բայց այլ առումով, եթէ միւսները կարելիութիւն չ'ունին վարկանշային կարգով ընտրուած մարդիկ ունենալու, ատիկա, ըստ էութեան խումբին փոքր ըլլալուն ցուցանիչն է: Այդ առումով, բնականաբար դժուարութիւններ պիտի յառաջանան, որովհետեւ շատ մեծ թիւով եւ տարբեր տարածքներէ թեկնածուներ պիտի մասնակցին», ըսաւ ան:

Ըստ ՀՅԴ պատգամաւորին, գրեթէ ամէն մէկ ձայն հաշուուած պիտի ըլլայ: «Այսինքն՝ անտէր քուէներ պիտի չ'ըլլան, ասիկա որոշ չափով լաւ է, որ ժողովուրդին մէջ առաւել աշխուժութիւն ըլլայ», ըսաւ ան՝ միեւնոյն ժամանակ չ'բացատրելով, որ խմբակի ներքին աշխատանքներուն մէջ կրնան «անարդար դրսեւորումներ ըլլալ»:

«Վարկանշայիններուն մօտ կրնայ այսպիսի վիճակ մը յառաջանալ, որ մէկը աւելի շատ ձայն ստանալով՝ իր իսկ խմբակին մէջ իր աթոռը չ'ստանայ, իսկ միւսը իրմէ քանի մը անգամ պակաս ձայն ունենալով՝ ստանայ: Ասիկա անարդար է, միւս կողմէ կրնան ըսել, որ մեր մէջ եղող աթոռներն են, ի՞նչ կապ ունի միւսներուն հետ, բայց չ'է՞ որ մէջի անձը եւս ջանք ու եռանդ դրած է, սակայն չ'է անցած, այսինքն՝ ապահոված է խաղի կանոն մը, որմէ կրնայ օգտուել այն անձը, որ նուազ ձայներով կրնայ աթոռ ստանալ», ըսաւ ան:

Պատասխանելով վերջին հարցումին, թէ անիկա կրնա՞յ, որոշ ընդդիմադիրներու ձեռակերպումով, «Իշխանական բուրգի» փուլովման պատճառ դառնալ, Ռուստամեան եզրափակեց. «Կը կարծեմ, թէ ներքին դժգոհութիւնը կարելիութիւն պիտի տայ, որ այս ընտրակարգը կրկին վերատեսուցութեան ենթարկենք»:

Ս. Յակոբ Եկեղեցույ
Հոգաբարձութիւնը եւ դպրոցի
տնօրէնութիւնը մեծ հաճոյքով կը
հրաւիրեն ձեզի



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆ
Վ. ԵՒ Ա. ՍԱՐԱՖԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ
ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Ի Նպաստ Սուրբ Յակոբ Ազգային
Վարժարանի
Վ. Եւ Ա. Սարաֆեան Նախակրթարանի
Եւ Բաստրմաճեան Երկրորդականի



→

Շաբաթ, 1 ԱՊՐԻԼ 2017

Երեկոյեան ժամը 6:30-ին

Սոնթրէպի Հայ Կեդրոն

Տեղեկութեանց եւ տեղեր
ապահովելու համար դիմել՝
Տիկ. Էլիզապէթ Օհանեանին
514-979-9350

Կը խնդրենք որ ձեր
ներկայութիւնը հաստատէք մինչեւ
24 Մարտ 2017

Մուտքը նուիրատուութեամբ
Տուրքէ զերծ կացուցման ստացագիր՝
50\$ եւ վեր նուիրատուութեան

ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի 46-րդ մարզական խաղեր

25-27 նոյեմբեր 2016-ի շաբաթավերջին Գեմպրի մէջ կայացան ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի 46-րդ մարզական խաղերը, Հովանաւորութեամբ ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Գեմպրի մասնաճիւղին:

Խաղերը սկսան Ուրբաթ երեկոյեան եւ իրենց աւարտին հասան Կիրակի առաւօտեան: Իրենց մասնակցութիւնը բերին Արեւմտեան Միացեալ Նահանգներէն՝ Լոս Անճըլըսի, Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրզիի, Գանատայէն՝ Մոնթրէալի, Լաւալի, Թորոնթոյի, Սենթ Գաթրինի եւ Գեմպրի մասնաճիւղերէն 299 մարզիկներ՝ իրենց մարզիչներով, մարզական պատասխանատուներով, վարչական ներկայացուցիչներով եւ ծնողներով: Մարզախաղերը կ'ընդգրկէին հետեւեալ մարզաձեւերը՝ ոտնաձգակ, կողովագնդակ, ճատրակ եւ սեղանի թենիս: Իրենց ներկայութիւնն ու մասնակցութիւնը բերին նաեւ Գանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան պարոն Արմէն Եկանեանն ու իր ընտանիքը: Երեք օրերու ընթացքին, խաղերը ընթացան հեղաւած եւ անգամ մը եւս, այս օտար ասիւրներն եւ մարզադաշտին մէջ արտացոլաց հայաշունչ եւ ՀՄԸՄ-ավայել ոգին:

Շաբաթ երեկոյեան, տեղի ունեցաւ Յաղթանակի պարահանդէսը: Այս առթիւ յատկապէս Արմերիկայի Միացեալ Նահանգներէն հրաւիրուած համբաւաւոր երգիչ Յարութ Փամպուքեան «Մեր հայրենիք» օրհներգով կատարեց պարահանդէսի բացումը, որուն ներկայ էին 810 հայորդիներ: Խօսք առաւ ՀՄԸՄ Գեմպրի վարչութեան ատենապետուհի քոյր Յոլեր Մկրտիչեան եւ իր բարի գալուստի խօսքին մէջ նաեւ շնորհակալական խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս օժանդակեցին սոյն խաղերուն: Քոյր Յոլեր յատուկ կերպով անդրադարձան հայկական միութիւններու կարեւորութեանը, նամանաւանդ այս օտար ասիւրներն մէջ:

Բեմ բարձրացաւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Վեթերան ոտնաձգակի խումբի ներկայացուցիչ եղբ.

Ռաֆֆի Վարժապետեան եւ իր խումբին կողմէ յանձնեց երախտագիտութեան եւ գնահատանքի յուշանուէրը ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան Գեմպրի ներկայացուցիչ քոյր Լիոնի Սարմազեանին: Խրախճանքը շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը: Պարահանդէսի աւարտին Յարութ Փամպուքեանի ձեռամբ տեղի ունեցաւ ՀՄԸՄ Գեմպրի կազմակերպած վիճակահանութիւնը, որուն պարգեւն էր ինքնաշարժ մը (BMW X3 2017): Օրուան բախտաւոր զոյգն էր տէր եւ տիկին Սաբօ եւ Նաթալի Կօքճէնեանները: Նշենք, որ սոյն խաղերուն առթիւ, 2016 տարուան ընթացքին, մասնաճիւղը յղացաւ այս վիճակահանութեան գաղափարը, եւ Շրջանային վարչութեան ներկայացուցիչն ու օժանդակ եղբայրներն ու վարչական անդամները ջանք չխնայեցին յաջողցնելու ծրագրերը: Այս աշխատանքին իր մեծ ներդրումը ունեցաւ ՀՄԸՄ-ի Գեմպրի վաստակաւոր եղբայր Սամսոն Քահաբէճեանը, ինչպէս նաեւ տէր եւ տիկին Զարեհ եւ Լիոնի Սարմազեանները, որոնք «Red Carpet» երեկոյ մը կազմակերպեցին իրենց տան մէջ, որուն հասոյթը ամբողջութեամբ նուիրուեցաւ այս վիճակահանութեան:

Կիրակի առաւօտեան տեղի ունեցաւ յատուկ հիւրասիրութիւն պատրաստուած ՀՄԸՄ-ի Գեմպրի վարչութեան կողմէ, ապա հիւրերը առաջնորդուեցան դաշտ, ուր պիտի կատարուէր պաշտօնական փակումը: Տողանցքի ընթացքին իրենց ներկայութիւնը բերին Հոգեշնորհ Հայր Յովհաննէս Սաղաթեան՝ հոգեւոր հովիւ Գեմպրի Ս. Նշան Հայր. Առաքելական եկեղեցւոյ, Վերապատուելի Յովհաննէս Սարմազեան՝ հոգեւոր հովիւ Գեմպրի Հայ Աւետարանական եկեղեցւոյ, Վսեմաշուք պարոն Արմէն Եկանեան՝ Գանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան, եղբայր Մոսիկ Թոփուզեան՝ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ, պաշտօնական հիւրեր, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան անդամները, Հ.Յ.Գ. Գանատայի «Արարատեան» Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչներ, քոյր միութիւններու եւ



կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ծնողներ, ՀՄԸՄ-ականներ եւ ՀՄԸՄ-ի համակիրներ: ՀՄԸՄ Թորոնթոյի փողերախումբի առաջնորդութեամբ մուտք գործեցին մարզիկները, որոնցմէ ետք հնչեցին Գանատայի եւ Հայաստանի զոյգ քայլերգները: Օրուան հանդիսավարներն էին քոյր Յոլեր Մկրտիչեան (հայերէն) եւ քոյր Սարին Սարմազեան (Անգլերէն), որոնք իրենց բարի գալուստի եւ շնորհակալական խօսքերէն ետք բեմ հրաւիրեցին եղբ. Համօ Արզումանեանը, որ կիթառի ընկերակցութեամբ մեկնաբանեց «Ձինուորի երգը», ապա յաջորդաբար բեմ բարձրացան օտար պաշտօնական հիւրերը՝ Roger Saini MP, Katherine McGary MPP եւ Bryan May MP, որոնք իրենց քաջակերական խօսքերը ուղղեցին ներկաներուն, մերթ ընդ մերթ կայացաւ մետալներու եւ բաժակներու տուչութիւնը: ՀՄԸՄ-ի Գեմպրի վարչութիւնը յուշանուէրներ յանձնեց Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ յուշանուէր մը ստացաւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն: Վարչութիւնը նաեւ երախտագիտական եւ շնորհակալական յուշանուէրներ յանձնեց տէր եւ տիկին Հրայր եւ Նէնսի Պետրեաններուն, որոնք ստանձնած էին մետալներու բարեբարութիւնը, տէր եւ տիկին Զարեհ եւ Լիոնի Սարմազեաններուն, որոնք նիւթապէս եւ բարոյապէս

մեծ օժանդակութիւն բերած էին ձեռնարկներու յաջողութեան, ինչպէս նաեւ եղբ. Սամսոն Քահաբէճեանին՝ իր կատարած բարոյական օժանդակութեանց: Տիկին Ալին Պաքճեան մեկնաբանեց «Իմ անունը Հայաստան է» երգը: Բեմ հրաւիրուեցաւ ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Նաճառեան, որ փոխանցեց Շրջանայինի խօսքը, ապա Գանատայի Մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան՝ վսեմաշուք պարոն Արմէն Եկանեան փոխանցեց իր սրտի խօսքը, որմէ ետք ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թոփուզեան փոխանցեց ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան խօսքը: Աւարտին բեմ հրաւիրուեցան Հայր Յովհաննէս Սաղաթեան եւ Վերապատուելի Յովհաննէս Սարմազեան՝ աղօթքով եւ «Պահպանիչ»-ով փակելու պաշտօնական հանդիսութիւնը: Ապա փողերախումբը հնչեցուց «Յառաջ նահատակ» օրհներգը:

Երեք օրերու ընթացքին կայացած ձեռնարկները արդիւնքն էին յանձնախումբերու եւ վարչական անդամներու մէջ տարուան բժախնդիր աշխատանքին: Անոնք աւարտեցան մեծ յաջողութեամբ եւ յատկանշուեցան իրենց կազմակերպութեամբ եւ օրինակելի ծրագրաւորումով:

ՀՄԸՄ-ական քոյր մը

Համագրայինի Ամանորը

«Ամանորի գնդուն գանգեր»ը կրկին հնչեցին 14 Յունուար 2017ին, երբ Մոնթրէալի Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահի յարկին տակ, մօտ 250 Համագրայինականներ եւ Համագրայինի «Սանահին» մասնաճիւղի սաստար կանգնող ազգայիններ տօնեցին Ամանորը, համախմբուած միասին, ընկերային ջերմ մթնոլորտի մը մէջ:

Համագրայինի Հայ Կրթական եւ Մշակութային միութեան «Սանահին» մասնաճիւղի ատենապետուհի՝ ընկ. Թամար Շահինեան վարչութեան անունով բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն: Ան իր անուշ ժպիտով, սեղան առ սեղան յատուկ շնորհակալութիւն յայտնեց անցնող տարեշրջանի ընթացքին իրենց մասնակցութիւնը բերած Համագրայինի բարեկամներուն, պաշտօնեաներուն, գաղութիա Շրջանային Վարչութեան, Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Վիգէն Թիւֆէնքեանին ու բոլոր անդամներուն, որոնք իրենց մասնակցութիւնը բերած են ու կը շարունակեն բերել «Սանահին» մասնաճիւղի գանգան գեղարուեստական մարզերէն ներս՝ պարով, երգով, թատրոնով, կերպարուեստով, զբաղման ձեռնարկներով, զբաղարանէն թէ՛ գրատարածէն ներս իրենց մասնակցութիւնը բերելով, «Փոքրերու Պատմութեան ժամ»երը ճոխացնելով, ինչպէս նաեւ «Թէյ, սուրճ եւ Կարծիքներ» եւ Ֆիլմի ակումբները վարելով: Ուրախալի էր ճամբարանականներու վարչութեան ներկայութիւնը եւ մեծապէս ողջունելի էր Պոլսահայ Միութեան վարչութեան ներկայութիւնը, որ ընդառաջելով վարչութեանս հրաւերին ներկայ գտնուեցան սոյն տօնակատարութեան առաւել եւս ամրապնդելով սերտ համագործակցութիւնը:

Քաջ գիտնալով թէ՛ երգչախումբի մը դերը անհրաժեշտ է հայ երգն ու մշակոյթը պահպանելու համար գաղութի մը մէջ, ընկերակցութիւնը բեմ հրաւիրեց՝ մասնաճիւղիս նորակազմ մանկապատանեկան «ՆԱՆՈՐ» երգչախումբը, ղեկավարութեամբ ընկ. Լուսին Ժամկոնեանի: Մանուկները յաջորդաբար ուրախ-զուարթ երգեցին «Ձանգակներ», «Ամանորի գնդուն գանգեր», «Լուս գիշեր», «Les anges», «Oggi nato Salvatore», եւ «The first Noel» երգերը:

Երեկոյն շարունակուեցաւ ուրախ մթնոլորտի մը մէջ, երբ հանդիպարը բեմ հրաւիրեց Պոլսահայ միութեան անդամներէն Ճիմին, որ իր մասնակցութիւնը բերաւ oldies երգերով: Իրեն յաջորդեց «Քնար» երգչախումբի անդամներէն ընկ. Լաուրա Պէրպէրեան, որ իր հմայիչ ձայնով մեկնաբանեց Գալանտէրեանի «Իմ Հասակն է» երգը:



Բարձր գնահատելի էր երիտասարդներու ներկայութիւնը, որոնք իրենց շուրջ պարերով կ'արտայայտէին իրենց սէրը հայ մշակոյթի եւ հայրենի հողին նկատմամբ: DJ Կարոյի ճոխ ընտրացանկը հրահրեց տարեցներն անգամ միանալու երիտասարդներու խումբին:

Թէ՛ աշխարհում փակ դռներն կան թող որ բացուեն այս գիշեր Ու Նոր Տարին, նոր խնդութեամբ թող ներս մտնի այս գիշեր: Մետաքսէի այս խօսքերով հանդէս եկաւ մեր գաղութի հանրաձայնօթ ասմունքողներէն ընկ. Անահիտ Պալեան: Անոր յաջորդեց իր մայրը՝ Ազնիւ Թորոսեան, որ իր թովիչ ձայնով ու ապրումով ասմունքեց Համօ Սահեանի «Եղեւին»:
Երեկոյն շարունակուեցաւ ընկ. Ատոմ Մալխասեանի խաղերով՝ որոշ խանդավառութիւն ու հաճելի մթնոլորտ ստեղծելով ներկաներուն մօտ, որոնք մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը, պարեցին երգեցին ու զուարճացան:

«Առաջնորդի Ընթրիք» Մոնթրեալի Մէջ

Հովանավորութեամբ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, 5 Փետրուար, 2017ին տեղի ունեցաւ Առաջնորդարանի պաշտօնական ճաշկերոյթը Le Crystal սրահին մէջ :

Առաջնորդական Ընթրիքի հանդիսավարն էր պրն. Վահագն Գարագաշեան: Բարի գալուստի եւ բացման խօսքին մէջ հանդիսավարը ըսաւ. «Ազգային Առաջնորդարանը Գանատայի հայ հաւաքականութեան եւ հայ անհատի ինքնագիտակցութեան գլխաւոր բաղադրիչները հանդիսացող՝ հայոց լեզուին, գիրգին, հոգեւոր կեդրոնին, մշակոյթին, սրբազան հող հայրենիքին եւ Հայ Դատին պահպանն ու շատագովն է»:

Ան նաեւ անդրադարձաւ Ազգային Առաջնորդարանի տարած կարեւոր ու առանցքային առաքելութեան մասին իր համառօտ ու ամփոփ տեղեկատուութեամբ:

Պրն. Գարագաշեան ներկայացուց երեկոյի գեղարուեստական յայտագրի մասնակիցները: Ինչպէս, գաղութի մէջ Համաշխարհային ճանաչում ունեցող շուժակահարուհի Նունէ Մելիքը եւ անոր ընկերակցող դաշնակահար Michel-Alexandre Broekaert, որոնք երաժշտական կտորներ հրամցուցին ունկնդիրներուն, գաղութի Կոմիտասէն եւ ինչպէս նաեւ 19րդ դարուն ապրած Cédar Franck-էն: Ապա Արտէն Արապեանը իր եռեակով, որ արդի ոճով հայկական ու եւրոպական երգերու ճազային շարք մը հրամցուց ներկաներուն:

Առաջնորդարանի կողմէ պատրաստուած լսատեսողական տեսերիք մը ցուցադրուեցաւ սրահի պաստառին վրայ, որուն մէջ յիշուեցաւ, Առաջնորդարանի տարած վեց ամսեայ աշխատանքն ու առաքելութիւնը:

Այս առթիւ, տիկին Պերթա Մինասեան Հէլըր \$20,000 ամերիկեան տոլար նուիրեց Ազգային Առաջնորդարանին, որպէսզի գործընթացը առաւել ծաղկի, որպէս կենսական ու կարեւոր առաքելութիւն:

Ճաշկերոյթի աւարտին, Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեան, ներկաներուն փոխանցեց իր սրտառուց պատգամը ու ըսաւ. «Առաջնորդարանը իր ամբողջական ճիգերով պիտի շարունակէ իր առաքելութիւնը մեր ժողովուրդի ծառայութեան եւ անոր երիտասարդ սերունդին ջամբելու հայեցի շունչ եւ քրիստոնէական հաւատք՝ ճշմարիտ մարդը եւ հայր կերտելու իր մէջ»: Առաջնորդ Սրբազան Հայրը շեշտեց կարեւորութիւնը Առաջնորդարանի հասկացողութեան եւ վստահեցուց, որ Առաջնորդարանը մեր բոլորին տունն է:

Բարգէն Արքեպիսկոպոս շնորհակալութիւն յայտնեց բոլորին, իրենց մասնակցութեան եւ ներկայութեան համար սոյն ճաշկերոյթին, յիշեցնելով, որ Առաջնորդարանը կանգուն կը մնայ շնորհիւ իր ժողովուրդի զաւակներուն աջակցութեան ու հաւաքական ճիգին:

Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» մաղթերգով երեկոն հասաւ իր աւարտին:


Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց Հայաստանի Հանրապետութեան դեսպանատուն

Երեքշաբթի, 7 Փետրուար 2017-ին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեան իր պաշտօնական առաջին այցելութիւնը կատարեց Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատուն:

Տէր եւ տիկին Արմէն եւ Մարիա Եգանեաններ Դեսպանատան մէջ հիւրընկալեցին Առաջնորդ Սրբազան Հայրը, ուր ներկայ էր նաեւ Գանատահայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Արքար Եպս. Յովակիմեանը: Այս առթիով, Դեսպան Արմէն Եգանեան՝ Բարգէն Արքեպիսկոպոսին պարգեւատրեց Նախարարուհի Հրանոյշ Յակոբեանի «Շնորհակալագիր» պաշտօնական գիրով:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերակցէին Ազգային Վարչութեան անդամներ՝ պրն. Գրիգոր Տէր Ղազարեան, ատենապետ եւ տիկին Մովիկ Թեղեան: Շքախումբին մաս կը կազմէր նաեւ ՀՅԴ Բիւրոյի անդամ՝ Յակոբ Տէր Խաչատուրեան:



 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ www.sourphagop.org

VIP Rooms with web camera Open 24/7



Pick up & drop off • Grooming
Daycare • Long-term

1396 Don Mills Rd. Unit 31 Toronto ON M3B 0A7
416.510.2434

www.beverlyhillsdoggiehotel.com

 **Gary Chahinian**
ABR., Broker of Record - Owner
RE/MAX DIAMOND Realty Inc.
W torontohomes.ca
E gary@remaxdiamond.com

416-258-8892

 **Noor Fine Food**
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

 **Ani Imastounian**
Sales Representative
Direct: 647-403-4046
anirighthome@gmail.com
www.imastounian.com

Two Marceau Shegel Centre
893 Don Mills Rd., Suite 112
Toronto, ON M3C 1W3
Office: 416-391-3232
Fax: 416-391-0319

Member of the Toronto Real Estate Board

I Appreciate Your Referrals! Thank You

 **Sutton**
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

 **Annie Varbedian**
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedian@hotmail.com
www.suttongroupadmiral.com

 **hearing aid source**

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

 **Crown Pastries**
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
crownpastries@hotmail.com
www.crownpastriesbaklava.com

 **I.D.A.**
Part of the  family of pharmacies.

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Արեւմտահայերէն-Արեւելահայերէն. Մերձեցման Հարցեր

Պատմական Ակնարկ

Հայերէնը մէկ եւ անտրոհելի հասկացողութիւն է բոլոր հայերու համար, անկախ անկէ՝ թէ որակապէս իրարմէ որքանո՞վ կը տարբերին մեր խօսուածքները՝ բարբառ ըլլան անոնք, խօսակցական լեզու, թէ գրական հայերէնի ճիւղերէն մէկը:

Գրական հայերէնի երկու ճիւղերը՝ արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը, երբեք չեն դիտուած իբրեւ երկու լեզուներ, որովհետեւ զանոնք կրողները դաւանած են մէկ հայրենիքի ու մէկ ազգի գաղափարը, հետեւաբար զանոնք նկատած են իբրեւ միեւնոյն ազգային լեզուի գրական տարբերակները, որոնք կազմաւորուած են պատմաքաղաքական եւ աշխարհագրական տարբեր միջավայրերու մէջ, ծառայած՝ ազգային ինքնութեան պահպանման, նպաստած՝ մեր մշակոյթի գարգացման ու ժառանգաբար հասած՝ մինչեւ մեր օրերը, իւրաքանչիւրը՝ իր տարածաշրջանին մէջ կամ խառն ի խառն, ինչպէս է պարագան մերօրեայ քանի մը գաղութներուն:

Գրական հայերէնի արեւմտեան ճիւղը Յեղասպանութեան պատճառով կորսնցուցած ըլլալով իր գարգացման բնական միջավայրը՝ գոյատեւելու խնդիր ունի, իսկ արեւելեան ճիւղը Հայաստանի Հանրապետութեան մէջ փաստօրէն պետական լեզու դառնալով՝ գարգացման աւելի նպաստաւոր պայմաններ ձեռք բերած է: Ասիկա, սակայն, հարցականի տակ չի դնէր արեւմտահայերէնի գոյութեան իրաւունքը: Անիկա աշխարհասփիւռ արեւմտահայութեան ինքնութեան պահպանման, գրականութեան ու մշակոյթի գարգացման, մասամբ նաեւ գիտութեան ու աշխարհաճանաչման ընկալման, հաղորդակցութեան լեզու է ու իբրեւ Հայ դատի անմիջականօրէն կրող զանգուածի լեզու, յանուն ազգային գերագոյն իտէլայներու, դատապարտուած է կենդանի մնալու՝ առանց տարանջատուելու գրական հայերէնի արեւելեան ճիւղէն: Մեր գրական լեզուի երկու տարբերակները այս Հանրապետութեան մէջ տակաւին դատապարտուած են առանձին գոյատեւելու՝ բայց ընդմիջտ մերձեցման ու չօտարուելու միջոցներ ստեղծելով եւ իրագործելով:

Հայ մտաւորականութիւնը գրական երկու ճիւղերը ընդունած է իբրեւ պատմական իրողութիւններ. ոչ ոք առաջադրած է մերժել մէկը եւ ընդունիլ միւսը: Զարթօնքի, իրապաշտ ու նախաեղեռնեան սերունդներու մեր գրողները անկաշկանդ կերպով աշխատեցան իրենց ի գործ դրած գրական լեզուի տարբերակը գարգացնելու, կանոնակարգելու գործը՝ առաւել կամ նուազ չափով օգտուելով գրաբարի, միջին հայերէնի ու իրենց կրած բարբառներու ատաղձէն, մեր լեզուի ներքին գարգացման բոլոր հնարաւորութիւններէն: Ատոր ապացոյցն է, որ նախաեղեռնեան սերունդի մեր երկու գրական լեզուներն ալ հասան բառապաշարի հարստացման, լեզուի արտայայտչական միջոցներու գարգացման, քերականութեան կանոնակարգման ու կայունացման ցանկալի մակարդակի: Ու այդ գործընթացին մէջ շատեր թելադրեցին գրականները մօտիկցնելու ու անոնց միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները նուազեցնելու սկզբունքը եւ անով առաջնորդուեցան: Ահաւասիկ ատոր շնորհիւ է, որ թէ՛ արեւմտահայ եւ թէ՛ արեւելահայ գրականները ուղղագրութեան բարեկարգման բոլոր վէճերուն մէջ միացան ընդհանրական կանոնակարգի մը շուրջ ու դուրս մղեցին այնպիսի բարբառային առանձին երեւոյթներ, որոնք աւելի եւս պիտի ընդլայնէին անդունդը (ինչպէս արեւմտահայերէնի շարունակական ներկայի կորը, ստորագասականի նէն, յոգնակի ստացականութեան նիս, նիդ, նին մասնիկները, արեւելահայերէնի օժանդակ բայի ա տարբերակը, ցուցական դերանուններու էս, էդ, էն տարբերակները եւ այլն): Տիրապետող կեցուածք ստեղծուեցաւ շեշտուած բարբառայնութեան դէմ, որուն շնորհիւ շեշտակի փոփոխութիւն կը նկատուի կարգ մը գրողներու վաղ ու յետին շրջանի ի գործ դրած լեզուական որակներուն միջեւ (Պերճ Պօօջեան, Ռաֆայէլ Պատկանեան, Գաբրիէլ Սունդուկեան, Աւետիք Իսահակեան. արեւմտահայոց մէջ Թլչկատինցիէն Զարդարեան անցումով լուծուեցաւ բարբառայնութեան խնդիրը): Բոլորը գիտէին լեզուի բառապաշարի հարստացման մէջ օտարամուտ եզրոյթներու անհրաժեշտութիւնը, բայց կը նկատէին նաեւ մէկ կողմէ գերակայ լեզուներու ու միւս կողմէ՝ մեր գրական լեզուներու բաղաձայնական համակարգի տարբերութիւններէն յառաջացած այդ շերտի բառամթերքի տարանջատիչ էութիւնը: Կեցուածք ստեղծուեցաւ օտար եզրոյթներու փոխարէն՝ հայերէնի բառակազմական հնարաւորութիւններէն օգտուելու եւ հայերէնը ազատելու այդ օտարումի ծառայող բեռէն: Ասոր մէջ կը մտնէին նաեւ արեւելեան լեզուներէն բարբառներու միջոցով յատկապէս արեւելահայ բանաստեղծութեան մէջ մուտք գործած բառերու հսկայ քանակը հայերէնով

փոխարինելու անհրաժեշտութիւնը (ազիզ, դուրբան, եարա, բալա, թաւա, շիրա եւ այլն):

Կարեւոր է նշել, որ նախաեղեռնեան շրջանին մեր երկու հատուածները մամուլէն դուրս նաեւ գործակցութեան անմիջական բեմեր ալ կրցան ստեղծել: Քաղաքական պայմաններու բերումով հալածական արեւմտահայ թատրոնը կ'երեւէր Թիֆլիսի մէջ: Արեւմտահայ գրողներ կը ստեղծագործէին ու ճամբայ կը բանային արեւելահայոց մէջ (Ծերենց, Շանթ, Առանձար), իսկ արեւելահայ գրողներ՝ արեւմտահայ շրջանակներու մէջ (Շիրվանզադէ, Ահարոնեան, Իսահակեան): Եւ ասիկա բնականաբար պիտի երեւէր գրական լեզուներու մերձեցման ոլորտին մէջ:

Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումէն ետք այդ վարչակարգին ստեղծած փակ պայմաններուն ու շատ հարցերու պարագային, տիրող կուսակցութեան Կենտկոմի պարտադրած օրէնքներու բերումով, կարելի է ըսել, որ մեր գրական երկու լեզուներուն միջեւ մինչ այդ ստեղծուած կամուրջները քանդուեցան: Լեզուի կանոնակարգման հարցերու քննարկումները առողջ հունէ դուրս դրուեցան, ու նուիրականացաւ առաւօտուն լոյս տեսած պետական օրէնքը: Գրական երկու ճիւղերու մերձեցման առաջին ծանրագոյն հարուածը եղաւ Ուղղագրութեան ռեֆորմը (բարեփոխումը, 1947), որ ուղղակի կերպով չինական պարիսպ ստեղծեց հին ու նորի միջեւ, արեւելահայերէնի հին որակի եւ ընդհանրապէս դարաւոր հայ գրականութեան ու նորի միջեւ, եւ ամէնէն կարելորդ՝ օտարեց աւանդական ուղղագրութիւնը պահող սփիւռքի մեր գրական աշխարհը՝ արեւելահայ ըլլալ, թէ արեւմտահայ: Պետական լեզու նկատուող հայերէնը ըմբռնուեցաւ միայն արեւելահայերէնը, ու դարձեալ բնական ընթացքով արեւմտահայերէնը համարուեցաւ բարբառ ու դուրս դրուեցաւ երկից պաշտօնական հաստատութիւններէն, տարրական դպրոցէն: Ու այս մթնոլորտին բնական հետեւանքը եղաւ այն, որ արեւմտահայերէն ստեղծագործող հին ու կայացած հայրենադարձ յայտնի գրողներ փոխեցին իրենց գրականը, մամուլը փակեց արեւմտահայերէնի էջը: Սփիւռքի մէջ արտադրուած գիրքն ու մամուլը Հայաստանի շուկայ չիջան:

Հետագայ տասնամեակներուն, յատկապէս 1960-ական թուականներէն ետք, որոշ ըմբռնումներ պարբերաբար բարեփոխուեցան ինչպէս արեւմտահայ թէ սփիւռքահայ գրականութեան, այդպէս նաեւ արեւմտահայերէնի նկատմամբ: Սփիւռքահայ հեղինակներ լոյս տեսան հայրենիքի մէջ, պարբերականներ հրատարակուեցան սփիւռքահայութեան համար (անշուշտ՝ նոր ուղղագրութեամբ), սփիւռքահայ գրականութիւնը տեղ գտաւ բունհերոս (բարձրագոյն ուսումնական հաստատութիւն) ծրագրներու մէջ, դասական ուղղագրութեամբ գասագիրքեր առաքուեցան սփիւռք եւ այլն: Աւելի'ն. որոշ լեզուաբաններ բարձրաձայնեցին արեւմտահայերէնի բառապաշարէն օգտուելու ու յատկապէս նորամուտ օտար բառերը արեւմտահայերէնի հետեւողութեամբ հայացնելու անհրաժեշտութիւնը: Արեւմտահայերէնի մասին խօսուեցաւ արդէն իբրեւ աշխարհաբարի գրական երկու ճիւղերէն մէկը: Ոմանք նոյնիսկ արժարծեցին նոր ուղղագրութեան բերած անպատեհութիւններուն մասին: Հայրենի մտաւորականութիւնը չէր կրնար անտարբեր գտնուիլ մէկ կողմէ արեւելահայերէնի գարգացման զարտուղութիւններուն ու միւս կողմէ՝ մեր երկու գրականներու մերձեցման հրամայականին նկատմամբ:

Սփիւռքի մէջ գրական երկու լեզուներուն նկատմամբ նախաեղեռնեան մօտեցումները աւելի շօշափելի դրսեւորումներ ունեցան: Հայաստանի Հանրապետութեան անկումէն ետք արտասահման անցած մեր մտաւորականութիւնը տեղ գտաւ սփիւռքահայ մամուլին, բեմին, կրթութեան ու հասարակական ատեաններուն մէջ: Յեղափոխական ու քաղաքական նախկին գործիչներու վաւերագրական ու յուշագրական գրականութիւնը երեւան բերաւ երկու գրական լեզուներու իւրաքայտուկ մերձեցման յատկութիւններ: Հայաստանեան գրական աշխարհէն դուրս շարտուած մեր դասականներ եւ խորհրդահայ գրողները՝ Րաֆֆի, Զարբնց, Ակսէլ Բակունց, Լեւ Կամսար, Գուրգէն Մահարի, Մկրտիչ Արմէն ու դեռ տասնեակ-տասնեակ գրողներ լոյս տեսան սփիւռքի մէջ՝ իրենց բնագրային հարագատութեամբ: Տարեկան տասնեակ-տասնեակ անուն գիրքեր: Սփիւռքի մէջ գրական ո՞ր լեզուով ստեղծագործելու, մամուլի էջ կազմելու հարց երբեք չէ դրուած: Արեւելահայ եւ խորհրդահայ գրականութիւնը լայնօրէն կը փնտուռէին դպրոցական եւ հանրային գրադարաններուն մէջ: Խորհրդային գիրքի գրախանութիւններու հայերէն բաժիններու առջեւ հերթ կը գոյանար: Դպրոցական ընթերցարաններու մէջ միշտ տեղ գտած են արեւելահայ գրողները: Նախակրթարաններու վարի կարգերէն արեւ-

ելահայերէնը հասկնալի ու ընթեռնելի կը դառնար հայ դպրոցականին համար: Մինչեւ օրս սփիւռքի նախակրթարաններէ շրջանաւարտը արդէն ոչ միայն կը զանազանէ, այլեւ անկաշկանդ կերպով արեւմտահայերէնի կը վերածէր արեւելահայերէնի բացառականն ու ներգոյականը (Չրից, Չրում), ներկայ ու անկատար ժամանակները, վաղակատարը (գրում եմ, գրում էի, գրել եմ, գրել էի), դերանունները (սա, սրա, սրան, սրանից), կը ճանչնայ խոնարհման տարբերութիւնները եւ այլն: Միով բանիւ՝ արեւելահայերէնը դեռ տարրական նախակրթարանի մէջ օտար ու անհասկնալի լեզու չէ: Կ'արժէ վկայել, որ Արեւելքի մեր գաղութներու մէջ նախակրթարանի վերի կարգերու աշակերտը բնագիրէն կը կարդայ Թումանեանի «Գիքոր»-ը, Աղայտեանի հեքիաթները, Րաֆֆիի «Խննթը», «Ջալալեփտին»-ը, «Կայծեր»-ը եւ այլն: Ընթերցանութեան եւ քերականութեան դասագիրքերուն մէջ միշտ ալ նկատելի է արեւելահայերէնին նոր յատկութեամբ մը չհակադրուելու միտումը թէ՛ բառագիրութեան եւ թէ՛ ձեւաբանութեան մակարդակներուն վրայ: Աշակերտը հետզհետէ կը զանազանէր հիմնական բառամթերքի իմաստային, կիրառական, ձեւաբանական մասնակի տարբերութիւնները ու միայն արեւելահայերէնին յատուկ բառերը (վայրկեան-րոպէ, ճերմակ-սպիտակ, ձգել-զցել, ըսել-ասել, դգալ-գդալ, հով-քամի, երխայ-մանուկ, լեռ-սար, գիր-տառ, հէնց, ջան եւ այլն): Քերականութեան դասագիրքերը մերձեցման եզրերը գրական լեզուի կանոնակարգին մէջ յամառօրէն կենդանի պահելու միտումով թելադրեցին հոլովական ու հնչիւնափոխութեան այնպիսի տարբերակային ձեւեր, որոնք աւելի յատուկ են արեւելահայ գրականին: Լեւոն Շանթ իր «Քերականութիւն» գիրքին մէջ շատ աւելի համարձակ քայլ առաւ: Ան հիմք ունենալով արեւմտահայ խօսակցական լեզուին մէջ գոյութիւն ունեցող, բայց գրականին կողմէ դուրս դրուած տրականաձեւ ուղիղ խնդիրի պարագան՝ թելադրեց գրել՝ ես քեզի կը սիրեմ, դուն ինձի կը փնտոես կաղապարը՝ ընդհուպ մերժելով հայցական հոլովաձեւի առկայութիւնը դերանունական հոլովակարգին մէջ: Շանթի մահով ալ վերջ գտաւ Շանթի դպրոցին մէջ իրագործուող այս մօտեցումը: Հայրենիք-սփիւռք բնականոն յարաբերութիւններու պայմաններու պարագային, կը կարծեմ, որ այդ տարիներուն մերձեցման շատ աւելի մեծ ու կայուն ձեռքբերումներ կրնային ունենալ մեր երկու գրականները:

Սփիւռքը, իր արեւելախօս թէ արեւմտախօս հատուածներով, խորհրդային վարչակարգի հետ ամենաջերմ, թէ ոչ մէկ պաշտօնական յարաբերութիւն ունեցող հատուածներով չվարանեցաւ ու չլլացաւ տրամաբանական ու առողջ մերձեցման գործընթացին մէջ լուրջ մեխեր մխրճող հայաստանեան երեք երեւոյթներուն դէմ բարձրաձայն բողոքելէ ու կեցուածք արտայայտելէ:

Ուղղագրական բաժանումը,

Օտար եզրոյթներու անկասելի առատացումը,

Արեւմտահայերէնի հանդէպ անհրաժեշտ կեցուածքի բացակայութիւնը:

Ներկայիս

Ներկայիս ամբողջ հայութիւնը բոլորովին նոր իրադրութեան մը առջեւ կը գտնուի: Կայ Հայաստանի Հանրապետութիւնը՝ իր Ազգային ժողովով, որ Համազգային բոլոր հիմնահարցերը անկաշկանդ քննարկելու կարելիութիւնը ունի: Լեզուի հարցով հսկայական հարցեր կան ե՛ւ հայրենիքի մէջ, ե՛ւ դուրսը, թէ՛ արեւմտախօս, թէ՛ արեւելախօս մեր մեծ զանգուածներու շրջանակներուն մէջ: Հարցեր, որոնք երեւան եկան գլխաւորաբար յետանկախացման շրջանին, ատոր պատճառով կամ գուցադիպաբար:

— Նախկին ներքին գաղութներուն վրայ եկան աւելնալու ու օրրստօրէ աւելի բազմանալու արեւմտեան երկիրներու մէջ ու քիչ մը ամէն տեղ կազմուող արեւելախօս բազմամարդ գաղութներ, որոնք տակաւին հայերէնի ուսուցման եւ հայեցի դաստիարակութեան գոհացուցիչ պայմաններ չեն կրցած ստեղծել, եւ ասիկա տարուէ տարի ճակատագրական կրնայ ըլլալ:

— Խառն գաղութներու մէջ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի ներդաշնակ ուսուցումը ջամբելու հարցը խիստ այժմէական կը դառնայ: Նոյն դպրոցին մէջ աշակերտութիւնը բաժնելու ու դասերը առանձին վարելու գործընթացը հարուած է մերձեցման որեւէ ցանկութեան ու կրնայ քաղաքական իմաստով ալ տարանջատիչ գործօն հանդիսանալ մեր ազգային Դատի



Noor Fine Food™

Gourmet Mediterranean Cuisine

Հայկական և միջին արեւելեան ճաշատեսակներու ձեր պահանջներուն համար դիմեցեք «Նուր Ֆայն ֆուո» հաստատութեան, որ միշտ պատրաստ է, ձեր ապսպրանքները (Քէյթրինկ) ճիշդ ժամանակին հասցնելու ձեր հասցէին:



Թորոնթոյի հասցէն.-

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111

Fax 416 745 9337

by Samadi Iraqi Group

📱 www.instagram.com/noorfinefood

«Նուր Ֆայն ֆուո» հաստատութիւնը տեսակաւոր խորովածներու (քեպապ) պատրաստութեան մասնագիտութիւնը ունի, մինչեւ իսկ լման գառնուկ կը խորովէ յարակից ուտելիքներով: Նշենք, որ գառնուկները ծնած և մեծցած են Օնթարիոյի մէջ:

Հաստատութիւնը պատրաստ է մկրտութիւններու, նշանտուքներու, հարսնիքներու և այլ առիթներու խրախճանքներու կամ հաւաքոյթներու ձեր նախապիրած ուտեստեղէնը պատրաստելու: Իր գործող 5 ճաշարաններուն կողքին, հաստատութիւնը մտտորէն նոր մասնաճիւղ մը պիտի բանայ Հայաստանի մէջ:

Hrant Dink - Oratorio Contemporain

Organisé par la Fondation Bolsahay pour le 50^e anniversaire de S.A.I.



Majak Tosikyan
Compositeur



Bercuhi Berberyan
Paroles



Bogos Yegyazar
Soliste / Yerevan



Elie Berberian
Soliste / Montréal



Karin Cubukcuyan Bozkurt
Soliste / Istanbul

Avec la participation de



La chorale Knar-Hamazkayin
et les Amis de Hrant

YEREVAN

ISTANBUL

LOS ANGELES

MONTREAL



Lori Antounian
Chef d'orchestre / Montréal

Orchestre Impérial
et Arden Arapyan

SOLD OUT

~~Samedi le 18 mars 2017 à 20h00~~ - Dimanche 19 mars 2017 à 19h00

Première Église Évangélique Arménienne

11455 rue Drouart, Montréal, Québec H3M 2S6

Billets en vente au 514.337.0831 & 514.473.3031

Հորիզոն

ՇԱՐԱԹ՝ԱԹՆՐԹ

Օգոստոս 25 - Սեպտեմբեր 8



Միացե՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպեսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մեջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը:

Տեսարժան վայրերուն մեջ ընդգրկուած են.

Դաղիվանք, Գանձասար, Սեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ, Հանդաբերդ, Մակարավանք...

Խրախճանք Դիլիջանի անտառներուն մեջ եւ Արցախի հայկական գիւղերուն մեջ:

Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց:

Գին՝ \$3450.00 Double Occupancy | \$3650.00 Single Occupancy

Օդանաւի տոմս, հիւրանոց, շրջագայութեան փոխադրամիջոցներ, նախաճաշ, ճաշ, ընթրիք եւ համերգներու, պտոյտներու (Տաթեւի ճոպանուղի) տոմսեր ներառեալ: Ձեր հիւրանոցէն Երեւանի Հանրապետութեան հրապարակ քալելով 2 վայրկեան է՝ www.hotelaviatrans.am

Արձանագրուելու համար հեռաձայնել 514 332-3757 թիւին:



ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



www.aniristorante.ca

*Fine Dining
Catering
Party Room*
FOR ALL YOUR TOP E



Հովանադրութեամբ
Քերաշարի Տ. Բարգև Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Քեօի
Կազմակերպութեամբ
Ազգային Առաջնորդարանին



Մասնակցութեան սակ

\$4,300

Air France, double occupancy

(15 Մարտ 2017-Ան կար,
գինը կը բարձրանայ
10%)



ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ
ԹԵՀՐԱՆ - ԱՏՐՊԱՏԱԿԱՆ - ՆՈՐ ԶՈՒՂԱ
9-21 Սեպտեմբեր 2017

Ներառեալ՝ օդանաւի տոմս, պանդոկ, սնունդ,
վիզա, ներքին ճամբորդութիւններ,
բանկարաններ, տեսարժան վայրեր,
պատմական վանքեր եւ եկեղեցիներ

Մանրամասնութիւններու համար հեռաձայնել
Առաջնորդարան 514-856-1200 բիլիս
prelacy@armenianprelacy.ca

ԻՆՉՈ՞Ւ Կ'ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարոյականը, իմաստութիւնը, գիտութիւնը եւ ծառայութեան փաստը դադարած են փառասիրութեան, դիրքի տիրացման եւ ընդհանրապէս դեկավարման լծակ եւ չափանիշ ըլլալէ, պետութիւններու եւ ընկերային կազմակերպութիւններու պարագային: Ինչպէս սովորութիւն է ըսել, կրկնենք՝ յարգելով բացառութիւնները:

Մեր մոլորակի հեռու եւ մօտ անկիւնները, ընկերութիւններու առօրեային մաս կը կազմեն գայթակղութիւնները, բոլոր մակարդակներու վրայ, արքայական տուններէն մինչեւ նախագահները, երեսփոխանները, կուսակցութիւնները, միութիւնները, հաստատութիւնները, բոլոր այն վայրերը ուր մարդիկ խմբուած կ'ըլլան գործակցութեան եւ ծառայութեան կարգախօսներով:

Լրատուամիջոցները այդ բոլորի ամբոխները գուարճացնող թատերաբեմ են եւ կեր կը հայթայթեն իշխանատնչական մրցակցութիւններու, բոլորն ալ ընկերութիւնը եւ մարդկային յարաբերութիւնները բարելաւելու խոստումներով:

Երբեմն չարաչառութիւնը հեղինակները դիմակագրեմ կ'ըլլան, կամ կը մնան դիրքերու վրայ, նոյնիսկ յետ մահու կ'արժանանան լուսապսակի, իրենցմէ ետք եկողներու դիրքերը ամբացնելու համար: Ժողովուրդը ընդոծին ողջախոհութեամբ կը զգայ, կը տեսնէ, բայց քանի մը տարին անգամ մը իրեն տրուած քուէի գէնքով սրբագրելու անկարող է խաղբութիւնները:

Անմիջապէս տեսանելին անաշխատ հարստացումներն են, բազմաշերտ մակարդակներու վրայ, ամբողջ աշխարհի մէջ տարածուած փտախտը, «կոռուպցիա» (corruption), որուն հետեւանքով «յաջողութիւններ» կ'արձանագրուին, որոնք իրենց կարգին կը ծառայեն որպէս օրինակ ուրիշներու: Այսինքն փտախտը կը տարածուի ընկերութեան բոլոր շրջանակներուն մէջ, մեծ եւ պզտիկ համեմատութիւններով:

Ոչ միայն յետագէմ եւ ոչ-գարգացած, այլ մեծ, անցեալ ունեցող եւ օրէնքներու յստակ համակարգով կառավարուող երկիրներու մէջ: Միջազգային ամպագոռոգ ժողովներու մէջ ճառերը անպակաս են, զանազան պաշտօններու տիրացման թեկնածուները խոստումներ կ'ընեն վերացնելու համար փտախտը, «կոռուպցիա» իր բոլոր ձեւերով, կաշառակերութիւն, իշխանութեան չարաչառութիւն անձնական հարստացման համար, ընտանեկան իշխանութեան հաստատում (népotisme), խարդախութեամբ պետական գանձի կողոպուտ, երբեմն ալ օրինականութեան շղարշի տակ, առանց արդիւնքի հասնելու: Դատարաններու վճիռները սառցալիւրան երեւցող փոքրիկ մասն են միայն:

Փտախտը (կոռուպցիա) կ'արտայայտուի զանազան ձեւերով եւ զանազան մակարդակներու վրայ: Հայրը կամ մայրը, դիրքի չարաչառութեամբ, իրենց զաւակները կը տեղաւորեն զանազան պաշտօններու վրայ, ստեղծելով նոր օրերու «չսթէպլիշմընթ»-ային աւատակետութիւնը: Եթէ կարելի ըլլար կազմել ցանկը իւրաքանչիւր երկրի հաստիքաբեր դիրքերու վրայ գտնուող անձերու ընտանեկան պատկանելիութեան, աւելի իրատես կ'ըլլայինք:

Երբեմն փտախտի (կոռուպցիա)ի պարագաներ կը հրապարակուին եւ յայտնի մարդիկ դատարան կը տարուին, նոյնիսկ կը դատապարտուին, բայց քանի մը տարի ետք կը վերայայտնուին, եւ առանց խպնելու կ'ըսեն, թէ՛ »ընկերութեան հանդէպ իրենց պարտքը վճարած են«, յանցանքը քաւած են, եւ կը վերսկսին, կարծէք ոչինչ պատահած ըլլայ: Եւ

ոչ ոք կը զարմանայ: Զգարմանալով եւ մոռացութեամբ՝ բարենիշ կը տրուի:

Փտախտը (կոռուպցիա) ոճիր է, եւ ինքզինք յարգող պետութիւնը, կամ այլ իշխանութիւն մը, որ ինքզինք կոչած կ'ըլլայ ժողովուրդի ծառայութեան (այդպէս կը լսենք), այդ ոճիրին դէմ պայքարը առաջնահերթ պէտք է համարէ, եթէ ինք ալ մասնակից-մեղսակից չէ: Փտախտը, ուր որ ալ երեւան գայ, բարձրագոյն կամ համեստ մակարդակներու վրայ, ընկերութիւնը, ընկերային կարգերը, կանոնները, բարքերը հարուածող ոճիր է: Փտախտը, ուր ալ գտնուի, կ'արգելակէ յառաջդիմութիւնը եւ բարօրութիւնը:

Փտախտը (կոռուպցիա), որ համատարած երեւոյթ է, ընկերատնտեսական զարգացումը կը խոչընդոտէ, անկարելի կը դարձնէ, կը շեշտէ անհաւասարութիւնները, որոնց հետեւանքով կ'աճի թշուառութեան կեղը: Փտախտը կաշառակերութեանն անդին կը տարածուի, երբ անմիջական եւ մեծ շահերու հետամուտ ըլլալով, ներդրումները եւ նախաձեռնութիւնները կը դադրին ուղղուած ըլլալէ դէպի ընկերութեան եւ երկրին համար օգտակար եւ կենսական նպատակները: Ցած աշխատավարձով այլ երկիրներ երբ կը փոխադրուի արտադրութիւնը, յաւելեալ շահի համար երեւութապէս հանդուրժուող փտախտ է (կոռուպցիա), օրինականութեան պիտակով:

Փտախտը (կոռուպցիա) աշխատանքի արդիւնքի եւ միջոցներու անհատական իւրացման եւ կեդրոնացման հետեւանքով կը թափանցի համակարգը կը զրկէ կարելիութիւններէ, հետեւանքը կ'ըլլայ այն՝ որ բնակչութեան ուսումնական մակարդակը անկուճ կը կրէ, նոյն ձեւով անկուճ կը կրէ նաեւ առողջապահական մարզը,՝ բժշկութիւն, դարմանումներու որոնում, կենսապարգակի անկում: Այս վերջինի հակապատկերն է փոքրմասնուտութեան գայթակղեցնող ճոխութիւնը, պերճանքը, յղփացումը:

Անմիջականի ճշդումն է եթէ պահ մը հեռանանք, կը հաստատենք նաեւ որ փտախտը իր յորձանքին մէջ կ'աւերէ նաեւ անհատական ազատութիւնները եւ ժողովրդավարութիւնը, քանի որ զանոնք կը դարձնէ վաճառքի ապրանք, թշուառութեան մատնուածներու ազատութիւն-քուէն գնելով կամ մեծածախս ծանուցում-քարոզչական միջոցներով հանրային կարծիք ձեւաւորելով: Հարկ է երբեմն մտածել թէ ի՞նչ կ'արժեն երեսփոխանական կամ նախագահական ընտրութիւն մը:

Ոչ ոքի համար գաղտնիք է, որ արդարարատութիւնը եւ զանգուածային լրատուամիջոցները յաճախ թիրախ են եւ զոհ նոյն փտախտին, այսինքն՝ դրամի կայսերական նախապարձակման եւ տիրակալութեան:

Փտախտի (կոռուպցիա) ընկերային կեղը կայ ամենուրեք, մեծ եւ փոքր, հարուստ եւ աղքատ երկիրներու մէջ, ընկերութեան բոլոր մակարդակներուն, քաղաքներու եւ համայնքներու մէջ: Երբեմն գայթակղութիւն մը կ'իմացուի, կը յառաջանայ յուզում, նիւթ կը հայթայթուի լրատուամիջոցներուն, կը սրուին հետաքրքրութիւնները եւ ապակեանքը կը վերագտնէ իր հուներ: Հանրային կարծիքը հանդարտեցնելու համար օրէնքները սրբագրութիւններ կը փորձեն ընել, բայց անզօր են չարաչառութեան կեղը վերջնականապէս վիրահատելու:

Փտախտը կը հարուածէ համեստ

ԻնչՈ՞ւ... Ծար. էջ 14

Յ. Պալեան

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ

Խօսքէն գործի անցնելու համար

ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան կառավարութեան փետրուար 9-ի նիստին շարք մը յանձնարարութիւններ ըրաւ՝ «սփիւռքի ներուժի առաւել արդիւնաւէտ ներգրաւման նպատակով»— ինչպէս կը հաղորդէ Արմէնպրես:

Նշեմ, որ այս հարցը առաջին անգամ չէ, որ կ'արծարծուի, եւ Կարապետեան առաջին վարչապետը չէ, որ զայն կ'արծարծէ: Աւելի'ն. սակէ առաջ ՀՀ իշխանութիւնները յանձնարարութիւններ ընելէ անդին ալ անցած են, Հայրենիք-Սփիւռք խորհրդաժողովներ ալ կազմակերպած են, սակայն անհամար մը եւս կարիքը կը զգացուի վերարծարծելու, քանի որ բաւարար արդիւնաւէտ եղած ըլլալու չեն այդ բոլոր նախաձեռնութիւնները, ու հիմա կը բացայայտուի աւելի'ն իրագործելու կամք մը, գէթ կը դրսեւորուի ցանկութիւն մը վարչապետին իսկ բերնով:

Շատ բարի: Ձեմ ուզեր թերահաւատութիւն ցուցաբերել, ընդհակառակն, կասկած չկայ, որ պէտք է գնահատել վարչապետին ելոյթը, ուր յստակ շեշտ կը ստանայ «առաւել արդիւնաւէտ» բառակապակցութիւնը: Ան բաւական լայն կը բանայ կարկինը եւ իր խօսքը կ'ուղղէ ոչ միայն առանձին նախարարութիւններու՝ սփիւռքի, մշակոյթի-սպորտի-երիտասարդական հարցերու, կրթութեան-գիտութեան եւ տնտեսական զարգացման- ներդրումներու, այլեւ կը հրաւիրէ կամ կը մղէ ՀՀ նախարարութիւնները եւ գերատեսչութիւնները համատեղ ճիգերով ծրագիր մշակելու եւ իրենց գործունէութիւնը զարգացնելու այդ ուղղութեամբ: Առաւել, այդ ծրագիրը, որուն պատրաստութեան համար մէկ ամիս ժամկէտ կը տրուի ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ բոլոր մարմիններու դեկավարներուն, պէտք է հետապնդէ «սփիւռքի յայտնի մասնագէտներին, կառավարիչներին եւ նրանց կազմակերպութիւններին հետ երկկողմանի համագործակցութիւնը խորացնելու» աշխատանքը: Կենթադրեմ այստեղ գործածուած «կառավարիչներ» բառը պէտք է հասկնալ «ղեկավարներ» իմաստով, իսկ «նրանց»-ն ալ՝ «իրենց պատկանած» իմաստով, քանի որ մեր կազմակերպութիւնները չէ՛, որ իրենց «կառավարիչ»-ներուն կը պատկանին... Բայց մանրուքներու մէջ չկորսուինք, կարելորը ընդհանուր, ազգօգուտ նպատակն է, որ նկատի պէտք է առնենք: Այս առնչութեամբ Կարապետեան շատ հնարաւորութիւններ կը տեսնէ «առողջապահութեան, բիզնեսի, մշակոյթի եւ այլ ոլորտներում»:

Երկու ամիս ժամկէտ կը սահմանուի ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան, որ սփիւռքի նախարարութեան հետ մշակէ համատեղ ծրագիր՝ սփիւռքին օժանդակելու իր կրթական այլազան խնդիրները լուծելու եւ «սփիւռքի գիտնականների եւ նրանց կազմակերպութիւնների եւ Հայաստանի բուհական [բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու] եւ գիտական հաստատութիւնների միջեւ երկկողմանի համագործակցութիւնը խորացնելու եւ համակարգելու համար»:

Կարէն Կարապետեան մէկ շաբաթ կու տայ, որ ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարութիւնը սփիւռքի նախարարութեան միջոցով արտերկրի հայագրի գործարարները տեղեակ պահէ Հայաստանի մէջ ներդրումներ կատարելու եւ տնտեսական այլ գործարքներ ունենալու բոլոր հնարաւորութիւններուն:

Վերջապէս երկու ամիս ալ կը յատկացուի ՀՀ մշակոյթի, սպորտի եւ երիտասարդութեան հարցերու նախարարութեան եւ սփիւռքի նախարարութեան, որ այդ մարզերուն վերաբերեալ ծրագիր մը մէջտեղ գայ «սփիւռքում հայապահպանութեանն օժանդակելու, հայկական մշակոյթի տարածման եւ հայկական արժէքների քարոզման միջոցով Հայաստանն առաւել ճանաչելի դարձնելու համար»:

Գնահատելով հանդերձ վարչապետին այս գովելի նախաձեռնութիւնը, հասկնալով հանդերձ իր փութկոտութեան պատճառները (խորհրդարանական մօտալուտ ընտրութիւնները եւ անոնցմէ առաջ իր առաջնահերթութիւններու յստակացումը)՝ առաջին հարցումը որ մենք մեզի տալէ չենք կրնար խուսափել այն է, թէ՛ այդ տուեալ ժամկէտերը որքա՞ն իրապաշտ են այդքան լայնածիր գործունէութիւն մշակելու համար: Նախարարութիւնները ունի՞ն անհրաժեշտ մարդուժն ու նիւթական միջոցները այդպիսի գործի ձեռնարկելու համար՝ այդքան արագ եւ աւարտելու այդքան շուտ: Վաւերացուած նախահաշիւներուն ու ժամանակացոյցերուն մէջ նկատի առնուած էին այդ բոլորը:

Երկրորդ հարցը, ոչ նուազ կարեւոր քան առաջինը՝ ո՞ւր է սփիւռքի ներդրումը այդ ծրագրերուն մէջ: Մինչայժմ կատարուած են արդեօք պէտք եղած ուսումնասիրութիւններն ու վիճակագրութիւնները՝ ճանչնալու համար սփիւռքի ներուժը, կարիքները, Հայաստանէն ակնկալիքները եւ այլն: Առանց այդ ճշգրիտ ճանաչումին, ինչպէ՞ս կարելի է ծրագիր պատրաստել: Նաեւ ինչպէ՞ս՝ առանց սփիւռքի պատկան մարմիններուն հետ խորհրդակցելու, ճշտելու համար առաջնահերթութիւնները, կոռուպցիան եւ մասամբ նորին:

Երրորդ հարցը, որ նոյնպէս միւս երկու հարցերուն չափ կարեւոր է, կը վերաբերի Հայաստանի իրականութեան: Անցնող քառորդ դարը— հակառակ բոլոր դրական իրագործումներուն, անոնց կարգին՝ նաեւ սփիւռքի նախարարութեան ստեղծումը— դժբախտաբար չընթացաւ Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւններու զարգացման սպասուած ուղիէն կարգ մը յոռի երեւոյթներու պատճառաւ, ոմանք ժառանգուած խորհրդային շրջանէն, ուրիշներ ալ յառաջացած կամ շեշտուած անկախութեան տարիներուն: Առաջիններուն կարգին կան իրարու հանդէպ նախանձի եւ իրարու ոտքի տակ «օճառ դնելու» ախտերը, որ առաջին հերթին կը կիրարկուին տեղաբնակ պաշտօնատարներու, գործարարներու եւ այլ մարդերու ծառայողներու, նոյնիսկ արուեստագէտներու եւ մտաւորականներու միջեւ, ալ ո՞ւր մնաց սփիւռքէն ներգաղթած ու հոն հաստատուած հայրենակիցներուն նկատմամբ. երկրորդներուն կարգին՝ սակաւատէրբութիւն, մեծ դրամատէրներու մենաշնորհեալ վիճակը, յանցախուժներու բռնութիւնները յաջողութիւն արձանագրող ձեռնարկութիւններու վրայ եւ ապօրինի «հարկ»-երու գանձումը անոնցմէ՝ թոյլ տալու համար, որ շարունակեն գործել: Եւ վերջապէս օրէնքի առջեւ բոլոր քաղաքացիներուն հաւասար չըլլալու եւ ոմանց յաւելեալ «իրաւունքներ» վայելելու առաւելութիւնը՝ այլազան նկատառումներով եւ միջոցներով, ներառեալ կաշառակերութիւնը: Մէկ խօսքով՝ անարդար կարգերու առկայութիւնը:

Վստահ եմ, որ ՀՀ վարչապետը կը գիտակցի այս բոլորին. վստահ եմ, որ այդ ախտերէն մեր երկիրը ձերբազատել ինքն ալ կ'ուզէ, բայց պիտի կարենա՞յ արագ շարժիլ նաեւ ա՛յդ ուղղութեամբ, որպէսզի յաջողի սփիւռքի ներուժը առաւել արդիւնաւէտ կերպով ներգրաւել:

Անգլիացիի պիտի ըսէր՝ let's give him the benefit of the doubt, այսինքն ցուցաբերենք դրական կասկած, այլ բառերով՝ թերահաւատ չըլլանք եւ ակնկալենք որ պիտի յաջողի...

Վրէժ-ԱՐՄԷՆ

Սուրիոյ մասնատումը տակաւին կարելի՞ է

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Ռուսիա Թուրքիան կանգնեցուց հիւսիսային Պապ քաղաքի դարպասներուն առջեւ՝ անոր կամակատարներուն արգելք հանգիստանալու Հալէպի դարպասներուն առջեւ կապի մէջ մտնելու Սուրիոյ բանակին հետ: Սակայն շաբաթներ ետք արտօսեց, որ Պապ ներխուժէ, որպէսզի ինք ապահովէ ռազմավարական գետնի վրայ աւելի կարեւոր ձեռքբերում մը՝ Իտլիպը:

Մոսկուա Ասատի օրինականութիւն պարզեց միջազգային ընտանիքին ստիպելով Սուրիոյ ապագան քննարկելու համար ժընեւի մէջ բանակցելու Դամասկոսի ներկայացուցիչներուն հետ: Միայն շնորհիւ ռուսական ամբողջական աջակցութեան էր, որ Ասատ տասնամեակներէ ի վեր առաջին անգամ ըլլալով սպառնաց Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի: Ռուսիա նաեւ բանակցեցաւ յանուն Դամասկոսի եւ Թեհրանի (ճիշդ ինչպէս Միացեալ Նահանգներ բանակցեցան յանուն ժիհատականներուն եւ ըմբոստներուն), որովհետեւ թատերաբեմը արդէն կը պատկանէր Քրեմլինի, Ուաշինկթընի ուժերուն եւ դաշնակիցներուն:

Ասիկա Թուրքիայէն, Սէուտական Արաբիայէն եւ Քաթարէն կազմուած ճամբարին եւ Ասատի ու Իրանի ճամբարին միջեւ պատերազմ մը չէ: Ասիկա պատերազմ մըն է Ռուսիոյ եւ ամերիկեան վարչակազմին միջեւ: Օպամա Սուրիոյ մէջ ճակատամարտը կորսնցուց (ոչ պատերազմ) այն պահուն, երբ ընդունեց Մոկսուայի զգուշացումը: Թէ «առանց ռուսական ռազմական հետ նախօրօք համակարգումի սուրիական օդային տարածքին մտնելու որեւէ օդանաւ վար պիտի առնուի»: Ռուս-ամերիկեան լարուածութիւնները ներկայիս աշխարհը առաջնորդած են վտանգաւոր հանգրուանի մը:

ԻՐԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԾ ԳԼԽԱԻՈՐ ԾԱՆՆԵՐԸ

Ինչ կը վերաբերի Իրանի, անոր ուժերը Սուրիոյ մէջ ներկայ են 1982-էն ի վեր, երբ Իմամ Նոմէյնին իր յեղափոխական պահակազուտը ուղարկեց Զապտանի շրջան 1982-ի իսլամական ներխուժումէն ետք կազմելու եւ մարզելու համար լիբանանեան Հրզպալան: Ուստի Հալէպի մէջ այս յաղթանակը Ասատի համար անձնական յաղթանակ մը չէ, այլ Ռուսիոյ եւ «դիմադրութեան առանցքի» յաղթանակը (թէեւ Ռուսիա այս առանցքին մաս չի կազմեր): Ասիկա

նաեւ ահաբեկչութեան վրայ եւ Միացեալ Նահանգներ-Մոցի համագործակցութեան խորհուրդի կամակատարներուն վրայ սուրիական կառավարութեան յաղթանակն է: Ռուսիոյ միջամտութիւնը խնդրելով՝ Իրան յաջողեցաւ Լիբանանի մէջ Հրզպալան պաշտպանել, այլապէս ժիհատականներու եւ ըմբոստներու յաղթանակը Իրան-Հրզպալա զինուորական աջակցութիւնը շատ աւելի պիտի դժուարացնէին: Ժիհատականներն ու ըմբոստները 2012-էն ի վեր կոչ ուղղած են բոլոր արդիական գէնքերու եւ հրթիռներու կանոնաւոր մատակարարման համար պարտադիր անցք եղող Դամասկոսի ճամբով Թեհրանի եւ Հրզպալանի միջեւ պարտաւարը կորելու: Առանց գէնքերու այս շարունակական հոսքին, Հրզպալանի համար դժուար պիտի ըլլայ Լիբանանի մէջ իսրայէլեան բանակը դիմակայել, ինչպէս կատարեց 2006-ի պատերազմին: Իրան 1982-էն ի վեր օգտուեցաւ Դամասկոսի ճամբով Լիբանան մուտքի դիւրութենէն: Այսօր ան ներկայ է ամբողջ Սուրիոյ տարածքին:

ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԻՆՉՈ՞Վ Ե՞ ՊԱՍՏԵՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Ասիկա Միջին Արեւելքի մէջ ստեղծեց ռուսական ազդեցութեան ուժեղ շրջան մը, որուն մասին հազիւ թէ կրնար երազել Քրեմլինը:

Ռուսիոյ արտօսեց, հարկ ըլլալու պարագային, մահաբեր զինուորական ուժ գործադրել, համաչափ ռազմական կարիքներ, եւ մանաւանդ ՄԱԿ-ի մէջ պաշտպանութիւն տրամադրելով իր գործընկերներն ու բարեկամները պաշտպանելու կարողութիւնը փաստեց:

Ռուսիոյ արտօսեց սուրիական պատերազմը օգտագործելու իբրեւ իր զինուորական ուսման լաւագոյն բեմը՝ փաստելով իր զինուորի տարողութիւնը եւ իր ուժերուն արտօսելով սորվել ժիհատականներուն օգտագործած դասական-կերիլայական ոճի մարտավարութիւններէն: Այս մէկը իւրաքանչիւր բանակի երազն է:

Ասիկա Ռուսիոյ առիթ ընծայեց ցուցադրելու իր սպառազինութիւնը՝ իր ռազմավարական օդանաւներն ու հրթիռները, օդանաւակիրները եւ հեռուէն թիրախներ հարուածելու կարողութիւնը, եւ այդպիսով Մոսկուայի համար գէնքերու նոր շուկաներ յառաջացուց:

Հրզպալանի կազմակերպուած սակայն անկանոն ուժերուն առիթ ընծայեց կերիլայական պատերազմի մէջ իր ամենէն լաւ մարզուած մասնախումբ ուժե-

րու ճամբով դասական գէնքեր օգտագործել: Հրզպալան փորձառութիւնը շահեցաւ հրետանիի կամ օդային հարուածներու տակ իր ուժերը տեղափոխելու եւ կուռեցաւ ամերիկեան մասնախումբ ուժերուն կողմէ մարզուածներուն դէմ՝ անոնց, որոնք 1979-ին Աֆղանիստանի մէջ կուռեց Էլ Բաթրաի ուժերուն դէմ եւ Իրաքի մէջ՝ ամերիկեան ուժերուն դէմ: Հրզպալան կարողացաւ փորձառութիւն շահիլ սուրիական բանակին հետ կողք-կողքի կուռելով, վերջիններու ուժի եւ տկար կէտերը տեսնելու, ինչպէս նաեւ իսկական ճակատամարտներու մէջ անոնց վստահելութիւնը վայելելու: Յստակ է, թէ Հրզպալան անպայման այս իւրախատու փորձառութեան պիտի օգտուի իր յաւիտենական թշնամիին՝ Իսրայէլի դէմ յաջող պատերազմի ընթացքին: Իրան կարողացաւ դարձեալ ինքզինք հաստատել Սուրիոյ մէջ՝ երեւմտական աջակցութիւն տրամադրելով եւ իր կամակատարները կուռելու համար բերելու այդ երկիրը: Անոր ապագայ ներկայութիւնը կրնայ աւելի հանդուրժել ըլլալ բնակիչներուն համար, քան ինչ որ էր այս պատերազմէն առաջ:

Սուրիական բանակը վերածուեցաւ իր ժամանակին մեծամասնութիւնը զօրանոցներու մէջ անցնող բանակէ մը մարտական լայն փորձառութիւն ունեցող զինուորական այլ թեւերուն հետ (օդուժ, ծովուժ, ցամաքային ուժեր, զրահապատ մեքենաներու ուժեր եւ անկանոն ուժեր) ներդաշնակ կերպով գործելու կարող արհեստավար բանակի մը:

Դամասկոսի կառավարութեան ստիպեց ստեղծել Ազգային պաշտպանութեան ուժ մը եւ մասնախումբ ուժերու 16 յաւելեալ զօրամասեր, որոնք 1,5 տարուան մարզումի կ'ենթարկուին, կարող են ամէն տեսակի գէնքեր օգտագործելու, զինուած են կուռ գաղափարաբանութեամբ եւ խանդավառ Հրզպալանի նման գաղափարապաշտներու դիմաց կանգնելու: Այս ուժը, անկասկած, պիտի օգտագործուի Իսրայէլէն բռնազրաւուած ձեռքի բարձրունքներու վերադարձը պահանջելու համար:

ԻՐԱՆԻ ՈՒ ՀԸԶՊԱԼԼԱՆ ՊԱՏԵՐԱՊԱՏ ԵՆ ՅԱՐԶԱԿՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՍՐԱԵԼԻ ԴԵՄ

Ռուսիան պիտի չմիջամտէ Իրանի եւ Հրզպալանի ի նպաստ, եթէ վերջիններս իրենց գէնքերը ուղղեն Իսրայէլի դէմ կամ հարաւային Սուրիոյ ճակատէն յարձակում գործեն իսրայէլեան ուժերուն դէմ: Ռուսիա չէ հետաքրքրուած

այդ պայքարով, ուստի, Սուրիա-Իսրայէլ սահմանին վրայ ոչ մէկ անակնկալ յարձակում կը նախատեսուի, մինչեւ այն ատեն, որ Սուրիոյ մէջ Հրզպալանի զինանոցին դէմ իսրայէլեան օդային հարուածներուն ընթացքին Հրզպալանի զինեալներու կորսուտներ չեն արձանագրուած:


Բայցեւայնպէս, Ասատ կրնայ այդ հողին վերատիրանալու մասին մտածել, որովհետեւ այժմ Հրզպալանի նմանող ուժեր ունի: Ասատ այլեւս կարիքը չունի քիմիական գէնքերու, որոնք իրենց ազդեցութեան անհամեմատ աղմուկ կը ստեղծեն աշխարհի տարածքին: Բաւարար քանդիչ ուժով հեռահար հրթիռներ եւ Հրզպալանի ոճով կերիլայական պատերազմ մղելու կարող ուժ մը. այս երկու տարրերը մահացու գոլգորդութիւն մը են, որոնք Իսրայէլի եւ Միացեալ Նահանգներու համար կը ստեղծեն լուրջ մտավախութիւններ:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՏԱԿԱԻՆ ԶԷԱՒՐՏԱԾ

Սուրիոյ պատերազմը տակաւին չէ աւարտած, բայցեւայնպէս, անոր ընթացքով, հաւանական որեւէ փոփոխութենէ կամ բարդութենէ անկախ, պատերազմը շահելու Ռուսիոյ վճռականութիւնը հետզհետէ աւելի յստակ կը դառնայ: Ասատի մահը կամ իշխանութենէն հեռացումը հեռաւոր ապագայի դէպքերու գարագայան մէջ կը դառնայ անկարելի:

Ռուսիա Սուրիոյ այս արարին մէջ յաղթանակ արձանագրեց: Եթէ նորընտիր նախագահ Տանըլտ Թրամփի կառավարութիւններ տապալելէ զգուշանալու եւ ահաբեկչութեան դէմ պայքարելու իր յայտարարած քաղաքականութեան հետեւի, կը նշանակէ, թէ Միացեալ Նահանգներ չէ պարտուած: Փոխարէնը, ռուս-ամերիկեան նպատակները պիտի համընկնին՝ տարիներու ընթացքին «նոր պահպանողական» վաչակազմերու ամերիկեան միջամտութիւններուն պատճառով արձանագրուած հարիւր հազարաւոր զոհերու ու միլիոնաւոր տեղահանուածներու պատճառ դառնալէ ետք: Երբ երկու գերութիւն Միջին Արեւելքի մէջ կը կուռնեն, աշխարհի այդ մասին մէջ յաղթողներ չկան, այլ միայն քանդուած, կեանքերու եւ կալուածներու կորուստ: Ի վերջոյ, Սուրիան դարձած է ռուսական եւ ամերիկեան ազդեցութիւններու միջեւ բաժնուած հողամաս մը, անոնց վէճերը հարթելու բեմահարթակ մը:

(Շար. 2 եւ վերջ)

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website www.arsarmenianschool.ca

 Զեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊՒ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐՍԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

**Aline Bekerejian**
Notaire - Notary

Achat	Առեւտուր	Purchase	Procuration	Փոխաւորողազիր	Power of Attorney
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage	Testament	Կտակ	Will
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance	Succession	Կալուածք	Estate
Mandat	Պատուէր	Mandate	Mariage	Ամուսնութիւն	Marriage

180, rue Fleury ouest, Montréal, Québec, H3L 1T5
T. 514.382.7222 F. 514.381.1818
aline.bekerejian@notarius.net

ՆՈՏԱՐ ԱԿԻՆ ՊԵՐԵՐԵՆԱՆ

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais / Շատայուրիաները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

ՄԱՅՐ ԱԹՈՒԻՆ ՀԵՏ, «ՅՕԴԱ-ԿԱՊԵԱԼ»

3

Սահակ Կաթողիկոսը եւ Յարութիւն Պատրիարքը Երուսաղէմի, իրենք ալ Ամենայն Հայոց Հայրապետին նամակ գրեցին: Նաեւ՝ Յարին: Երկուքին նամակները նախ զրկուած են Օրմանեան Պատրիարքի, որ Ֆրանսերէնի թարգմանած է եւ յղած հասցէին²⁵⁵:

Մինչ Պատրիարքին նամակները գուցէ արխիւներու մէջ կը ննջեն, Սահակ Կաթողիկոսի նամակները լոյս տեսած են «Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան» Գիրք Դ-ի մէջ:

Կաթողիկոսին կողմէ Յարին ուղղուած նամակը²⁵⁶ կանխած է առ իրիմեան Հայրիկ նամակը²⁵⁷: Բայց այժմ, նախքան անոնց կէտերուն նշումը, պէտք է արձանագրել Օրմանեան Պատրիարքի «գործնական կերպով նկատի առնուելու արժանի մի գաղափար»ը²⁵⁸:

«Այդ ժողովին ժամանակ», իրիմեան Հայրիկ սկսած էր կասկածիլ, որ մի՞ գուցէ ուսուսական կառավարութիւնը իր հակահայկական շարժումը մինչեւ ծայրը մղելով՝ Մայր Աթոռը ջնջելու եւ տապալելու հասնէր: Ուստի, Հայ եկեղեցւոյ ապագան խորհելով, Օրմանեան Պատրիարքի խորհուրդը հարցուցած՝ թէ ի՞նչ նախագիշտութիւն հնար էր ձեռք առնել, որպէսզի օր մը Հայ եկեղեցին անգլուխ ըլլալու վտանգէն ազատ մնար:

Պատրիարքն ալ հարցումին գրաւոր պատասխանած էր, յիշեցնելով Կիրակոս Վիրապեցիին մինչեւ Մովսէս Տաթևացի էջմիածնի մէջ գործածուած միջոցը: Առանց «խնդիրի նիւթ» ընելու, թէ ո՞րչափ օրինական եւ կանոնական էր լիազօրյա իշխանութեամբ եւ օժմամբ ճոխացած Աթոռակիցներ ունենալ Աթոռակալին քովը, յստակօրէն բացատրած էր, թէ քանի այն ժամանակ դժուարին եւ գրեթէ անհնարին նկատուած էր Կաթողիկոսի վախճանումէն ետքը կանոնական ընտրութիւն կատարելը, գործնական առումով օգտակար էր եղած Աթոռակից ունենալու միջոցը, եւ Կաթողիկոսի կենդանութեան ատեն իսկ՝ յաջորդութիւնը ապահովուած, եւ Աթոռը ազատ պահած թափուր մնալու վտանգէն: Պատրիարքը շարունակած եւ կատարած էր առաջարկ մը, ըստ որուն՝ նախագիշտութեան համար յարմար էր գործածել Աթոռակիցի միջոցը, եւ թէ որպէսզի Աթոռակիցը ուսական ազդեցութեան ներքեւ չգտնուէր, եւ միջոցը աչքառու նորութիւն չգառնար, դիւրագոյն ձեւ մըն էր Կիլիկիոյ Աթոռակալը Մայր Աթոռին Աթոռակից հռչակել, որպէսզի եթէ երբեք էջմիածնի Կաթողիկոսը բռնութեան ենթարկուէր, կամ վախճանումէն ետքը նոր ընտրու-

թեան արգելմամբ Աթոռը թափուր մնար, Հայ եկեղեցին իր Ամենայն Հայոց Կաթողիկոսը ունենար ուսական Կայսրութեան սահմաններէն դուրս, որ կրնար իր իշխանութիւնը ուսահաստակ հայերուն վրայ ալ տարածել²⁵⁹:

Այս առաջարկը «մեռեալ տառ» մնաց, որովհետեւ շատ չանցած՝ միջազէպը «յաջող կերպով» փակուեցաւ²⁶⁰:

Եւ այժմ, ի՞նչ կէտեր կան Սահակ Կաթողիկոսի կողմէ Յարին եւ իրիմեան Հայրիկի ուղղուած նամակներուն մէջ:

Յարին ուղղուածը:

Ամիսն ու տարին՝ Դեկտեմբեր 1903: Օրուայ թուականը չկայ:

— Կը յայտնէ «նորոգ կարգադրութեան» վրայ «ի վիշտս թախծութեան» համակուրթը՝ թէ՛ իր եւ թէ՛ Կիլիկիոյ եպիսկոպոսներուն ու թեմակալներուն, նման՝ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան եպիսկոպոսներուն եւ թեմակալներուն:

— Կը յայտարարէ, թէ էջմիածնի Հայրապետական Աթոռը կը ճանչնայ ու կը դաւանի իբրեւ Գերագահ եւ Մայր ամենայն եկեղեցեաց հայոց, որ ընդ ամենայն ծագս երկրի», եւ թէ՛ «յօղակապեալ եմք ընդ նմա ոչ միայն զօրութեամբ կոչման մերոյ եւ պաշտաման, այլ եւ ուխտելք»: Ուստի, Աստուծոյ եւ սեփական խղճին առջեւ պարտաւոր կը դատէ աղերսել «ամենաբարեպաշտ Վեհափառութեան», եւ հայցել՝ որ ան իր Հովանաւորութիւնը չզլանայ Հայ եկեղեցւոյ:

— Կը յիշեցնէ, թէ նախորդ ցարերն ալ բաշխած են իրենց Հովանաւորութիւնը, որ տարածուած է «մինչ ցաւուրս մեր»: Թէ անոնք պաշտպան հանդիսացած են «եկեղեցական իրաւանց եւ խնամակալ կրօնական կենաց նորին»: Յիշեցման իր յորդորին մէջ, կը սեւեռէ Պօթմէնիայի «պարգեւ»ը, ըսելով. «Յաւերթայիշատակ Մեծ Կայսրն Նիկիոյս Ա. ոչ շատացեալ այսքանեօք ողորմածութեամբք, հաճեցաւ նուիրագործել եւ յապահովի կացուցանել զգարաւոր իրաւունս եւ արտօնութիւնս Հայ եկեղեցւոյ հիմնական օրինօք 1836 ամի, պարգեւելով բացարձակ իրաւունս մատակարարութեան նոցին եւ կառավարութեան ծխական դպրոցաց եւ հոգեւոր դպրոցաց Ընդհանրական Հայրապետին Ամենայն Հայոց»:

— Կը հասկցնէ, թէ «նորոգ կարգադրութիւն»ը եղծումն է եկեղեցւոյ հիմնական կանոններուն, որոնք հաստատուած են Առաքեալներու օրերէն: Անիկա նոյն ատեն անիրաւութիւն մըն է քաղաքական իրաւունքի անկրկնէն, որովհետեւ ամենուր քաղաքական օրէնքները «ճանաչեն եւ ի յարգանս ունին զսեպակալութիւն», ոչ թէ միայն օրինաւորապէս ընդունուած կառոյցներու, այլեւ՝ իւրաքանչիւր անհատներու:

— Հայ եկեղեցւոյ իրաւունքներուն խափանման վերջնական հետեւանքը ցոյց կու տայ, բացատրելով. «մշտնջենաւոր խափանումն իրաւանց մատակարարութեան համագոր է ժամանակուր զրկման յիրաւանց ստացութեան եւ տիրապետութեան այսպէս եւ մշտնջենաւոր խափանումն իրաւանց մատակարարութեան եւ Հայ եկեղեցւոյ զհետ բերէ զբացարձակ դադարումն եւ զկատարեալ ջնջումն իրաւանց ստացութեան եւ տիրապետութեան զոր ունէր ցարք եկեղեցին հայոց», եւ թէ՛ խափանումը Հայ եկեղեցւոյ ինքնութիւնն ու էութիւնը կը ջնջէ:

— Խափանումը ցոյց կու տայ իբրեւ հակասում ուս պետութեան օրէնքներուն:

— Հայերը կը ներկայացնէ միակ ձգտումով՝ թէ անոնք միայն կ'ուզեն անարատ պահել իրենց եկեղեցին, կրօնական աւանդութիւններն ու ծէսերը եւ լեզուն, թէ «այլ ձգտումն ներքին» կամ գաղտնի ձգտում չունին, եւ իրենց հասցէին յերկրածոյ ամբաստանութիւնները «մեծաւ ցասմամբ» մերժելով կը մերժեն:

— «Պաղատախառն ողբովք» կը հայցէ, որ Յարը հաճի իր Բարձրագոյն հրամանով խափանել «զտարադէպ հետեւանս» նոր կանոններուն, եւ սպիացնել դար ու դարեր Հայ եկեղեցւոյ կրած վէրքերն ու բուժել հարուածները:

— Նամակը կ'աւարտէ աներկբայ վստահութեամբ, թէ իր «խոնարհ խնդրուածոց» աղերսները ուշադրութեան պիտի արժանանան: Եւ կը կնքէ Կայսերական Վեհափառութեան եւ անոր ընտանիքին ու ազգին մաղթանքով:

Իրիմեան Հայրիկին ուղղուածը:

Թուականն է 3 Փետրուար 1904:

— Կ'անկարկէ որպէս նորընտիր Կաթողիկոս իր 31 Յուլիս 1903 թուակիր նամակին²⁶¹: Եւ թէ՛ անկէ ետք «չարադէտ պատեհութիւն»ն «նոր բօթեր»ը պրկած էին իր գրիչն ու լեզուն, եւ չէր կրցած մխիթարութեան նամակ յղել Մայր Աթոռ: Ինչպէ՞ս կարելի էր, որ եղածին վրայ «կրկնակի մխիթարութեան» կարօտ սգաւորն ու թախծաւորը մխիթարութեան խօսք գրէր: Հայ եկեղեցին իր իրաւունքներէն կապտելը՝ անոր գոյութիւնը ջնջելու արարք է: Եւ ոչ թէ միայն ուսական Կայսրութեան մէջ, այլեւ աշխարհի բոլոր կողմերը: Եկեղեցական ըլլալ եւ եկեղեցւոյ մահուան վրայ սուգ ու թախիծ չունենալը՝ կը նշանակէր «անհոգի, անսիրտ եւ անզգայ ապառաժ լինել»:

— Կը տեղեկացնէ, թէ մտածած է Թուսիոյ օտար դաւանութիւններու Նախարարութեան նամակ մը գրել, կարծելով որ թերեւս աւելի կարեւորութիւն եւ նշանակութիւն կրնար ունենալ: Եւ նա-

մակին պատճէնը զրկած էր Կ. Պոլիս Գէորգ եպս. Երեցեանին, որպէսզի ան մի քանի իրաւագէտ եւ դիւանագէտ բարեկամներու ցոյց տար, եւ անոնք ալ քաղաքականութեան դպչելիք եւ այլ անյարմար մասերը յապաւէին, Ֆրանսերէնի թարգմանէին եւ Սիս դարձնէին, որպէսզի ինքն ալ պէտք եղած տեղը յղէր: Սահայն Գէորգ եպիսկոպոս նամակը Օրմանեան Պատրիարքին կարգալ տուած էր: Ան եւ այլք «բաւական երկար եւ քաղաքականութեամբ վիրաւորիչ» գտած էին նամակը, ուստի գայն ետ դարձուցած, հետը՝ Կ. Պոլսոյ 12 եպիսկոպոսներու Յարին ուղղուած նամակին եւ դեսպանին ուղղուած յիշատակագրին պատճէններուն, եւ յանձնարարած՝ որ «աւելի» մեղմացնէ իր նամակը, կամ ալ ներփակեալ գրութիւններուն հետեւողութեամբ՝ Յարին հասցէագրուած ուրիշ նամակ մը պատրաստէ:


— Կ'ափսոսայ, որ Յարին գրուած իր եւ այլոց նամակները «սփոփարար արդիւնք ունենալու տեղ», կը թուի որ աւելի խստացուցած էին անոր սիրտը եւ անոր կողմէ տրուած իրերայաջորդ որոշումները գիրար գերագանցած էին «իրենց կաշկանդիչ եւ մինչեւ իսկ եկեղեցւոյ առտնին իրաւունքները բռնաբարող բնոյթով»:

— Եւ կը խոստովանի, թէ «իրաց այս տխուր վիճակ»ին դիմաց՝ միայն մնացած է բեկեալ սրտով աղաչել Աստուծոյ, որ ինք հոգայ իր եկեղեցին, որպէսզի անիկա անսասան մնայ մինչեւ յաւիտեան:

«Չարագէտ պատեհութիւն»ը պիտի լուծուէր ի բարին, ինչպէս նախապէս յիշուեցաւ: Ի դէպ է այս մասը փակել սա դիտարկութեամբ. «բարեյաջող վերջաւորութեան մէջ, եթէ Մայր Աթոռոյ եւ բովանդակ ուսահայոց ընդդիմութիւնը իւր գլխաւոր դերն ունեցաւ, եթէ քաղաքական ու գինուորական դէպքերն ալ ազդեցութիւն գործեցին, տաճկահայ Պատրիարքութեան եւ եպիսկոպոսութեան բարձրացուցած ձայնն ալ իրեն նշանակութիւնը ունեցաւ եւ յաջողութեան ազդուապէս սատարեց»²⁶²:

ԳԱՌՆԻԿ ԱՆ. Ք. Գ.

- Ա.ՂԲԻՒՐՆԵՐ ԵՎ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
- 255.- ՕԱԳ, յօդ. 3031, ս 5172:
- 256.- ՎԱԳ, էէ 179-181:
- 257.- Ն, էէ 184-185:
- 258.- ՕԽԳ, է 233:
- 259.- Ն, էէ 232-233:
- 260.- Ն, է 233:
- 261.- ՏԵՍՎԱՍ, էէ 179-181:
- 262.- ՕԽԳ, է 232:



ՀՈՐԻԶՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ 2017

Միացէ՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Մեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր բոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը

Մանրամասնութիւնները կարդալ ծանուցումներու ներդիրին մէջ

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ՝
Գերջ. Տեր Բարգէն Արքեպս. Չարեան-ի
Կազմակերպութեամբ՝ ՀՕՍ-ի «ՍՕՍԷ» եւ «ԸՈՒՅԻ» մասնաճիւղերուն



WOMEN OF 1915

The epic journey of women survivors of the Armenian Genocide and the odyssey of the relentless human rights advocates who empowered them.

A Documentary Film by **Bared Maronian**

Վաւերագրական Ժայռակնի
«ԱՌԱՋԻՆ» Ներկայացում

Սեծն Սոնթրալի մէջ
Բեմադրութեամբ՝
Պարէտ Մարոնեան-ի

ՇԱՐԱԹ՝ 11 ՄԱՐՏ 2017՝
Կ.Ե. ԺԱՍԸ 7-ԻՆ


Սուրբ Յակոբ Ազգային
Վարժարանի
«ԲԱՍԴԻՄԱՃԵԱՆ
ԹԱՏԵՐԱՍՐԱՆ»-էն ներս:
3400 rue Nadon, Montréal (Qc) H4J 1P5

Ներկայացումէն ետք՝
Հիւրասիրութիւն-Ընդունելութիւն

ՏՈՍՍԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

Ային Հատիստեանին՝514 804-2334
Սիլվի Գիլպէնկեանին՝514 241-0606

ՍՈՒՏՔԻ ՆՈՒԵՐ՝ 20\$



«Կանանց Միջազգային Օր» Տօնակատարութիւն «BRUNCH»

ԿԻՐԱԿԻ՝ 12 ՄԱՐՏ 2017՝ Կ.Ա. ԺԱՍԸ 10.30-ԻՆ
EMBASSY PLAZA > 1003 boul. Curé-Labelle, Laval (Qc) H7V 2V6

WOMEN OF 1915

The epic journey of women survivors of the Armenian Genocide and the odyssey of the relentless human rights advocates who empowered them.

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ՝
Վսեմաշուք պարոն,
Արմէն Եգանեան-ին՝
Հ.Հ. Արտակարգ եւ
Լիազօր Դեսպան

Կազմակերպութեամբ՝
ՀՕՍ-ի «ՍՕՍԷ» եւ «ԸՈՒՅԻ»
մասնաճիւղերուն

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝
Ընկերուհի Ալիս Մարգարեան-ի

ՏՈՍՍԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

Էլիզաբէթ Օհանեանին՝514 979-9350
Թանիա Ղարիպեանին՝514 803-3236
Սեդա Գալշեանին՝514 862-1402

ՍՈՒՏՔԻ ՆՈՒԵՐ՝ 40\$

Linda KHARABOYAN, LL.B., D.D.N.
Notaire et conseillère juridique



Testament
Mandat
Procuration
Financement
Immobilier
Attestations

Consultation personnalisée à domicile
Տուներու այցելութիւն ըստ փափաքի

1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9
T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezlenotaire.ca

VIZUALIS

optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire

514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO
Cristal

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL-Montreal QC
H4L 3L3

photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.

Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN

Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •
REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

Ahuntsic-Cartierville
Montréal

RÉSIDENTS DE BORDEAUX-CARTIERVILLE :
VENEZ ME RENCONTRER !

Je vous invite à venir échanger avec moi
d'enjeux locaux qui vous tiennent à cœur.

Harout Chitilian
Conseiller de la Ville
Vice-président du Comité Exécutif

POUR PRENDRE RENDEZ-VOUS :
514 872-8993
harout.chitilian@ville.montrealqc.ca




Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POWDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOURVEMENT SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու իննամսի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



CENTUM
Metroapp Wealth Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

SOSIE DERNERSSESIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4



Aline Bekerejian
Notaire - Notary

Նոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Դեքերեճեան

180, rue Fleury O., Montréal, Québec, H3L 1T5
T: 514.382.7222 F: 514.381.1818
aline.bekerejian@notarius.net

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՀՅԴ Գանատայի կեդրոնական կոմիտեն ցուակցութիւն կը յայտնէ մարմնի ներկայացուցիչ ընկ. Ռաֆֆի Տօնապետեանին, իր հօր՝ ողբ. ՍՈՒՐԷՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆԻ մահուան առթիւ:

Յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Ջարեանի, Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան, Հոգեւորականաց Դասուն, Ազգային պատգամաւորներուն եւ երեսփոխաններուն, խորագրաց ցուակցութիւն կը յայտնենք տէր եւ տիկին Յակոբ եւ Աննա Պուլկարեաններուն եւ հարազատներուն, աղօթելով որ Աստուած իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ հոգին հանգուցեալ Նուարդ Պասփիէի վանի: «Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ԴԻԻԱՆ ԳԱՆԱՏԱԿԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Արք. Ջարեանին, Ազգային Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովին, Հոգեւորականաց Դասուն, Ազգային պատգամաւորներուն եւ երեսփոխաններուն, խորագրաց ցուակցութիւն կը յայտնենք պրն. Սամ Լազարեանին, զաւակներուն եւ հարազատներուն, աղօթելով որ Աստուած իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ հոգին հանգուցեալ Սիրանոյշ Լազարեանին:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ԴԻԻԱՆ ԳԱՆԱՏԱԿԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀՅԴ «Միհրան Փափագեան» կոմիտեն ցուակցութիւն կը յայտնէ ընկեր Ռաֆֆի Տօնապետեանին եւ ընկ. Սեդա Պասմանեանին իրենց հօր՝ ողբ. ՍՈՒՐԷՆ ՏՕՆԱՊԵՏԵԱՆԻ մահուան առթիւ:

Արեւմտահայերէն...Սկիզբը էջ 8

ճանապարհին վրայ: Ոչ ոք թող ըսէ, որ ասիկա ներգաղութային կամ ներդպրոցական հարց է:

Արեւելահայերէնը մասամբ հեռանալով ուսերէնի իբրեւ գերակայ լեզուի հանգամանքէն՝ հետզհետէ կը մխրճուի անգլերէնի գերակայութեան տակ, որն ալ ոչ միայն օտար բառերու քանակը կ'աւելցնէ, այլ նոյն բառի տարբեր լեզուներէ եկած ըլլալու հնչիւնական ու տառադարձման տարբերակներու խառնիճադանձ մը կը ստեղծէ: Այս հոսանքին առջեւ մեր լեզուի բառակազմութենէն ու արեւմտահայերէնի փորձէն օգտուելու հրամայականը քիչ-քիչ առաջ կը մղուի:

Արեւմտահայերէնի ուսուցման ու զարգացման համար լուրջ մտահոգութիւններ ծնան Մերձավոր Արեւելքի մեր մեծագոյն գաղութներու մեծ ցնցումներուն, արտագաղթին ու ցրուումին պատճառներով: Արեւմտահայերէնը, որ մեր ժողովուրդի մէկ հատուածին հայապահպանութեան ամէնէն ապահով կոտանն է, գոյատեւելու ու նոր կեանքի կոչուելու հրամայականին առջեւ կը գտնուի: Պէտք է բարձրաձայնել նաեւ, որ երկրաշարժ, անկախութիւն, արցախեան պատերազմ եւ այլն, սփիւռքի ներուժը տարբերային ընթացքով ուղղորդեցին դէպի Հայաստան, ու բարձրիժողի եղան մեր կրթական, մշակութային հաստատութիւններն ու անոնց կարիքները: Ինչի՞ հետեւանք է Լիբանանի, Եգիպտոսի մեր դպրոցականներուն օտար վարժարաններ խուժելու երեւոյթը, հոս ու հոն դպրոցներու, թատրոններու, թերթերու փակումը: Սփիւռքի գերատեսչական մարմիններն ալ հոս ունին իրենց մեղքի բաժինը: Հայերէն գրողը իր տան չորս պատերէն դուրս գոյութիւն չունի, մինչ օտարազեր հեղինակներու փառաբանութեամբ կը լեցուին մեր թերթերու սիւնակները, անոնց համայնքով կը գինովնան մեր ոսկեղինիկի աշակերտները, հիւրախաղերու հրաւերով կը ծախսուին երեւակայական գումարներ, մինչ մեր թատրոնը կը փակուի, բեմադրիչը ուրիշ գործի կը նայի: Ոչ հեռավոր անցեալին կրթաթոշակ վճարել չկարողացողներուն բացը կը բացուէր լռիկ-մնջիկ: Սփիւռքը իր հարիւրաւոր դպրոցները պահելու այնպիսի փորձ ունի, որ կրնայ պետութիւններու նախանձը շարժել: Հիմա, աւելի քան երբեք, սփիւռքահայ դպրոցը համազգային հոգատարութեան ու զօրակցութեան պէտք ունի: Սփիւռքը, թէ՛ արեւմտախօս, թէ՛ արեւելախօս, ամէնօրեայ դպրոցներ հիմնելու եւ պահելու անյետաձգելի անհրաժեշտութիւնը ունի: Կրթութեան ասպարէզին մէջ համազգային նեցուկի պէտք ունի: Եթէ հայրենիքը սփիւռքի այս կարիքներուն հանդէպ հասկացողութիւն չցուցաբերէ, վաղը հայրենիքին ձեռք երկարող սփիւռք պիտի չգտնէ:

Նորագոյն մտահոգութիւններէն մէկն ալ հայրենիքի մէջ արեւմտահայերէնի տեղի փնտռուէն է: Դեռ մինչեւ երէկ արեւմտահայերէն հիմնական կրթութիւն ստացած, արեւմտահայերէնը կրող զանգուած մը կար հոս: Ի՞նչ պիտի ըլլայ այդ ժառանգութեան ճակատագիրը հայրենիքի մէջ. կը կրկնուի՝ 1946-ի հայրենազարծութեան, միայն մէկը յիշենք, վերջին վարագոյրը, թէ...

Այս բոլոր նոր մտահոգութիւնները աւելի եւս անհրաժեշտ կը դարձնեն հինէն եկող մեր լեզուական հիմնահարցերու լուծում բերելու, մեր երկու հատուածներու ճիշդ գերը համակցելու ու գրականներու մերձեցման շատ աւելի պատասխանատու կեցուածքով մօտենալու աշխատանքը:

Համագրայինի Գանատայի Շրջանային վարչութիւնը ինչպէս նաեւ «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնը իրենց խորին ցուակցութիւնները կը յայտնեն ընկ. Աննա Պուլկարեանին, ինչպէս նաեւ պարոն Յակոբ Պուլկարեանին եւ Ալիք Պուլկարեանին իրենց մօր եւ մեծ մօր՝ տիկին ՆՈՒԱՐԴ ՊԱՍՓԵՂԻՎԱՆԻ մահուան առթիւ:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը ցուակցութիւն կը յայտնէ ընկ. Աննա Պուլկարեանին եւ ընկ. Յակոբ Պուլկարեանին իրենց մօր եւ զոգանչին՝ ընկ. ՆՈՒԱՐԴ ՊԱՍՓԵՂԻՎԱՆԻ մահուան առթիւ:

ՄԱՀԱՋԴ

Տիար Յարութիւն Յարութիւնեան, Տէր եւ Տիկ. Յակոբ, Անահիտ Տէր Խաչատուրեան եւ զւկնք. Աշոտ, Արամ, Տիկ. Արմինէ Յարութիւնեան եւ դստեր՝ Լորի, Գարին, Տէր եւ Տիկ. Ռաֆֆի, Գայեանէ Նազարեան եւ զւկնք. Ուիլիամ, Լորա եւ համայն Յարութիւնեան, Տէր Խաչատուրեան, Նազարեան եւ Օհանէսեան ընտանիքներ սրտի խոր կսկիծով կը գուժեն դառնակսկիծ մահը իրենց տիկնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝ Ողբացեալ՝ ԱՍՏՂԻԿ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ - ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Ծնեալ 1937-ին Ադեմսանդրիա, Եգիպտոս) որ պատահեցաւ, Երկուշաբթի, 13 Փետրուար, 2017-ին, Sacre Coeur հիւանդանոցին մէջ: Տան կարգ տեղի ունեցաւ «Կոմիտաս» մեծախառն մէջ, Երեքշաբթի, 14 Փետրուարին: Եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, որմէ ետք, մարմինը ամփոփուեցաւ St. Laurent գերեզմանատան մէջ:



STUDENT WORKS PAINTING ESTABLISHED IN 1981. Let us paint your house for you this summer! - INTERIOR & EXTERIOR PAINTING - 3 YEAR WRITTEN GUARANTEE - \$5M LIABILITY INSURANCE - FULL CNESST COVERAGE - CONCIENTIOUS TRAINED STUDENTS - TOP QUALITY PAINTS, PRIMERS & STAINS. Nelly Ohannessian Owner/Operator m: 514-726-4951 e: nelly.ohannessian@gmail.com w: peinturesetudiants.ca Call me today for a FREE estimate!

horizon HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly Publié par / Published by Les Publications Arméniennes (1991) 3401, Olivar-Asselin Montréal, Québec Canada H4J 1L5 Abonnement annuel / Yearly subscription Canada 2e classe - 2nd class: \$80 plus applicable taxes 1re classe - 1st class: \$95 États-Unis / USA 1re classe - 1st class: \$95 US Ailleurs / Elsewhere 1re classe - 1st class: \$125 US Administration / Publicité Sylva Eshramdjian-Bachekjian (General Manager) Tél.: (514) 332-3757 Télécopieur/Fax (514) 332-4870 E-Mail: sylva@horizonweekly.ca Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail Dépot légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921 Ժապ Վարպետեան, (416) 722-9225 Լուսանկարիչներ՝ Արմեն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գալուստ Պապեան, Վազգէն Տէկիմեան

Financé par le gouvernement du Canada / Funded by the Government of Canada Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Եթե փոփոխություններ ընել կը ցանկաք ձեր կեանքին մեջ, ապա պատրաստ եղեք դիմադրելու եւ հանդուրժելու նոր կացություններու, որովհետեւ փոփոխությունները պիտի ստեղծեն ձեր անհաճոյ կացություններ. համբերատար եղեք:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Ձեր երազանքներն ու պահանջները եթէ յայտնուէք ձեր շուրջիններուն՝ անոնք աւելի լաւ պիտի ճանչնան ձեզ եւ պիտի փորձեն ամեն կերպ օգտակար դառնալ ձեզի: Դիմադրեալ մի վարակիք ձեր շուրջիններուն հետ բաժնեկցելու:

ԵՐԿՈՒՐՈՒԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Աւելի շատ ճկունություն կը սպասուի ձեզ մե, քան՝ հասկացողություն: Այս շրջանի հարկ է ճկուն եւ խելամիտ ըլլալ՝ դիմագրաւելու համար անձուդարձերուն եւ եղելություններուն ստեղծած դժուարությունները:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Զայժ եղեք. ինքնավստահութամբ նետուէցեք կեանքի ասպարեզ եւ առէ՛ք ձեր վճռական որոշումները: Դժուարություններու պիտի հանդիպիք, պատրաստ եղեք զանոնք դիմագրաւելու, պիտի կարենաք յաղթահարել բոլոր խոչընդոտները:

ԱՌԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Ինքնամոհոյք վիճակ մը ունիք այս շրջանին, բոլորովին հեռացած էք ընկերային շրջանակէն: Ուշադիր եղէ՛ք, որ երկար չտեսէ այս վիճակը, լաւ կ'ըլլայ, եթէ ընկերային հաւաքոյթի մը ներկայ գտնուիք, որպէսզի վերաթարման ձեր տրամադրությունները:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Պիտի զարգացնէք ձեր կապերը ձեր գործակիցներուն հետ, այս մէկը դրական ազդեցություն պիտի ունենայ գործերու ընթացքին վրայ: Ընդհանուր առմամբ հաճելի շաբաթ մը պիտի ըլլայ ձեզի համար. վայելցե՛ք:

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Տեսային գործերով զբաղեցե՛ք այս շաբաթ, տղամարդ թէ կին, մի՛ վարակիք, որովհետեւ այս շաբաթ անսպասու պայմաններ ստեղծուած են տունէն դուրս, հետեւաբար տունին մէջ ջերմ մթնոլորտ ստեղծելը աւելի նախընտրելի է:

ԿՐԻՏ (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Եթէ ձեր շուրջիններէն մէկը լաւ գործ մը կատարէ՝ գնահատեցե՛ք զայն հրակարակա՝ առանց վերապահութան: Պետք չէ միայն գնահատանք ակնկալել ուրիշներէ, այլ հարկ է նաեւ գնահատել եւ արժեւորել գիտնալ:

ԱՐԵՆԱՎՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Օգտուեցե՛ք բնութեան օգուտներէն, պաղ եղանակը թող չկաշկանդէ ձեզ, առիթը օգտագործեցե՛ք եւ վայելցե՛ք ձեր տեղեկացումները: Ըմբռնային զբաղմունքներու ծրագիր մը մշակեցե՛ք եւ ձեր ընտանիքին հետ լաւ ժամանակ անցուցեք:

ԱՅԾԵՂՋԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Նորություններով լի է ձեր շուրջի աշխարհը, կեդրոնացե՛ք եւ այդ անցուդարձերուն ընծայած նոր առիթները շահագործեցե՛ք. միշտ չէ որ պատեհ առիթներ կը ստեղծուին, կարելորդ գտնուէք որսալն է:

ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Նպատակ մը կը հետապնդէք ձեր մտքին մէջ, սակայն տակաւին պատեհ առիթը չէր ներկայացած զայն յայտարարելու: Պատրաստ եղեք, մտտորէն այդ առիթը պիտի ներկայանայ, եւ դուք պիտի կարենաք օգտագործել:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Աշխատանքը բացարձակապէս արգելք չէ ձեր ծրագիրներուն, ընդհակառակը, աշխատանքը կը խթանէ ձեր ուժերը եւ կը բարձրացնէ ձեր տրամադրությունը: Մի՛ մտահոգուիք, յաջողապէս պիտի կարենաք գլուխ հանել ամէն բան:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Աշխատանքը բացարձակապէս արգելք չէ ձեր ծրագիրներուն, ընդհակառակը, աշխատանքը կը խթանէ ձեր ուժերը եւ կը բարձրացնէ ձեր տրամադրությունը: Մի՛ մտահոգուիք, յաջողապէս պիտի կարենաք գլուխ հանել ամէն բան:

Այցելեցեք «Երկիր»ի Կայքէջը՝ www.yerkir.am

Ս. ԳԵՆՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԱՄԱԼ ՈՒՐ. ԳԱՆՈՒՍՏ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ:

- Տիկ. Սեղա Գրիգորեան 500
- Տիկ. Մատեն Թապարի 100
- Ս.Ս. Յակոբ Զամբիկեան 20
- Ս.Ս. Պետրոս Մանկիեան 20
- Ճօղիկեան ընտանիք 50
- Տիկ. Անժէլ Մէլէֆէճեան 40
- Ս.Ս. Կարպիս Մէլէֆէճեան 40
- Ս.Ս. Վերթոյր, Ջէփիտ Լուլու 30
- Ս.Ս. Թորոս Գարամանուկեան 30
- Տիկ. Սիմա Մարունեան 20
- Ս.Ս. Յակոբ, Տիրուկ Մանկիեան 40
- Բժ. եւ տիկ. Կարպիս Զարպիսեան 30
- Ս.Ս. Սաման, Այտա Զարպի 30
- Ս.Ս. Վաչէ, Արփի Փանոսեան 30
- Ս.Ս. Վարդգէս Բարսիսեան 30
- Ս.Ս. Յակոբ, Մովսէս Կուտեան 30
- Ս.Ս. Ճորճ, Տալիտա Պալիթեան 20
- Ս.Ս. Վաչէ, Մարիա Զաւթիկեան 50
- Ս.Ս. Սաօ, Սիլվա Թապարի 30
- Ս.Ս. Արրաճաճ Թովմասեան 40
- Ս.Ս. Զամբարձու, Մարո Քէօրճէքեան 30

ՈՒՐ. ՄԱՐԻԱՄ ՏՈՒՄԱՅԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ:

- Տիկ. Աղգանոյշ Տօյմասեան-Հատիտեան 50
- Ս.Ս. Զարեհ, Արփի Տօյմասեան եւ զինքը 50
- Ս.Ս. Մարգիտ, Մարի Տօյմասեան եւ զինքը 50
- Ս.Ս. Զայկ Արամ, Անի Տօյմասեան եւ զինքը 100
- Ս.Ս. Զատէն, Գեղամիկ Քէօրոյղեան եւ զինքը 50
- Տիկ. Լուսին Քէօրոյղեան եւ զինքը 30

- Տիկ. Ներսէս Հատիտեան 30
- Ս.Ս. Ռաֆֆի Հատիտեան 30
- Ս.Ս. Վրէժ Հատիտեան 20
- Ս.Ս. Փանոս Թօփալեան 50
- Ս.Ս. Պօղոս, Թինա Գարատանայեան 30
- Ս.Ս. Մկրտիչ, Տողիկ Տօյմասեան 20
- Ս.Ս. Ասատուր, Մարիա Եղազուկեան 100
- Ս.Ս. Յակոբ, Աստղիկ Գարպեան 20
- Ս.Ս. Քրիստափոր, Իօաննա Տօյմասեան 50
- Ս.Ս. Ֆէտէրիք Տիշէփօյա, ձէնիֆօր Տօյմասեան 50
- Ս.Ս. Արթիւր ձիւլապոյեան 20
- Ս.Ս. Արթիւր Նազարեան 30
- Տիկ. Անժէլ Պաշտման 30
- Ս.Ս. Յովիկ, Սիլվա Պիլմանեան 40
- Ս.Ս. Անդրանիկ, Սօսի Թալաթիեան 40

- Տիկ. Ճօան Թալաթիեան 20
- Տիկ. Լուսին Քէօրոյղեան 30
- Ս.Ս. Թօնի Իսիկեան 30
- Ս.Ս. Գէորգ Արզարեան 30
- ՈՒՐ. ՊԵՏՐՈՍ ԳԱՐԱՊԱՇԵԱՆԻ** յիշատակին:
- Որդ. Սիւզի Գարապաշեան, Ս.Ս. Փօլ, Վիքի Պօղոսեան եւ զինքը, Ս.Ս. Վարդան, Արփի Ինկիլիկեան, Ս.Ս. Օճան, ձէնյ Գարապաշեան 100
- Տիկ. Մարի Կարապետեան եւ զինքը 20

ՈՒՐ. ԳՕԳՕ ՊՈՂԱՐԵԱՆԻ մահուան առաջին տարիկիցին առթիւ:

- Ս.Ս. Մարտիկ Տէլիբանեան 50
- ՈՒՐ. ՅԱՐՈՒԹԻՐՆ ԱՆԹՈՆԵԱՆԻ** մահուան 25-րդ տարիկիցին առթիւ, ինչպէս նաեւ **ԽԱՉՏՏՈՐԻ** եւ **ԱՐՇԱՆՈՅՍ ՓԵՆԼԻՎԱՆԵԱՆԻ** յիշատակին:
- Տիկ. Զմրուտ Անթոնեան եւ զինքը 40
- ՈՒՐ. ԶՈՒՄՍԻՄԷ ԿԸԼԸՆՃԵԱՆԻ** մահուան 7-օրէքին առթիւ, մահացած Հայաստան:
- Ս.Ս. Նազարէթ, Զայկանոյշ Յակոբեան, Ս.Ս. Կարեն, Մարինէ Գալուստեան, Ս.Ս. Յակոբ, Էլիզապէթ Յակոբեան, Վերթոյրիա Յակոբեան 55
- Ս.Ս. Գարրիէլ Թաճանեան 20

Ս.Ս. Յովհաննէս Տէր Մեսրոպեան 20
- Ս.Ս. Լեւոն, Ադանի Տէր Մեսրոպեան 20
- Ս.Ս. Լեւոն, Լիա Զազարեան 20
- Տիկ. Սիրան Նազարեան 20
- Ս.Ս. Զայկ, Արուսեակ Դանիելեան 10

ՈՒՐ. ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԷԼ-ԵԱՆՆԵՐՈՒ, ՏԻԳՐԱՆ ԵՎ ՄԱՐԻ ԹԱՄԱՄԵԱՆԵՐՈՒ եւ **ԴԱՆԻԷԼԵԱՆ ԸՆՈՒՆԻՆԵՐՈՒ** յիշատակին:

- Ս.Ս. Թորոս, Սիրաբիկ Թամասեան 30
- ՈՒՐ. ՅԱՐՈՒԹԻՐՆ ԵՐԱՆՈՍԵԱՆԻ** յիշատակին:
- Ս.Ս. Յարութ, Մարլէն Օճանեան, Տիկ. Փօլին Երանոսեան եւ զինքը 20
- ՈՒՐ. ՆԵՐՍԷՍ ՆԱՍՈՑԵԱՆԻ, ՅՈՎ-ՀԱՆՆԷՍ ԵՎ ՎԱՐԴԱՆՈՅԸ** ՄԵԼՔՈՆԵԱՆՆԵՐՈՒ յիշատակին:
- Տիկ. Սիրաբիկ Նազարեան 25
- ՈՒՐ. ԱՐՄԵՆԱԿ ԳԱՆԱՔԵՐԵԱՆԻ, ՕՃԱՆԷՍ ԴՈՒԿԱՍԵԱՆԻ, ԱՐՇԱՆՈՅՍ ՍՈՍՈՑԵԱՆԻ** եւ **ՎԱՀՐԻՃ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ** յիշատակին:
- Տիկ. Աննա Գասպարեան, Օրդ. Լեւոն Գալամբերեան, Տիկ. Տողիկ Գասպարեան, Սիլվա Գասպարեան 20
- ՈՒՐ. ԽԱՉԻԿ ՊՕՋԻԿԵԱՆԻ** մահուան 2-րդ տարիկիցին առթիւ:
- Տիկ. Սոնա Պարսումեան 20
- Ս.Ս. Յակոբ Պօղիկեան եւ զինքը 20

ՈՒՐ. Զրանդ Աշեանի մահուան առաջին տարիկիցին առթիւ:

- Քրչ. Գէորգ Սրկ. եւ տիկ. Նեկտար Աղապաշեան 20
- Ս.Ս. Զրանդ, Լորի Աշեան 20
- ՈՒՐ. ՄԱԿԻ ՄԱՀՏԵՍԵԱՆԻ** մահուան 40-ին առթիւ, մահացած Հայկ:
- Ս.Ս. Կարապետ Տէլիբտարեան 20
- Բարեպաշտուհի մը բարի ապաքինման եւ գործի յաջողութեան Համար Տէր Ողորմես կը խնդրէ 50**

Բարեպաշտուհի մը իր եղբոր բարի ապաքինման Համար Տէր Ողորմես 100

- Փոխան Իւրազիկ**
- Տիկ. Սիլվա Աղապաշեան 200
- Ս.Ս. Գրիգոր Գրիգորեան 30
- Ս.Ս. Ճորճ, Վերթիկ Կարապետեան 25
- Տիկ. Սիրաբիկ Տէլիբեան 20
- Տիկ. Զայկ Աճեմեան 20
- Յակոբ Մեղրեան 10
- Տիկ. Զայրաբիկ Մէլէճեան 10
- Օր. Մարալ Արուսեան 10
- Տիկ. Արփիկ Քիւփեյեան 5

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋԸ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

- Րօզա Ինկիլիկեանի** մահուան առթիւ:
- Յակոբ Տէլիբեանեան ընտը. 40
- Վերդին ձիւլիկեան 40
- Ս. եւ Ս. Մեսրոպ Պէրէճիկեան 30
- Ս. եւ Ս. Նշան Մանուկեան 100
- Ս. եւ Ս. Յովհաննէս Պողոսապետեան 50
- Ս. եւ Ս. Գրիգոր Պապի 100
- Ս. եւ Ս. Ժողով Փոլոյեան 60
- Ս. եւ Ս. Մարգիտ Պապապետեան 50
- Ս. եւ Ս. Զրանդ Մահարեան 50
- Էօժէն ձիւլիկեան, ընտը. 50
- Ս. եւ Ս. Միսաք Թաթուրեան 40
- Ս. եւ Ս. Վարուժ Գապարեան 25
- Ս. եւ Ս. Պօղոս Միլոտանեան 20
- Մուրատ Իլքարյար 20
- Ս. եւ Ս. Ժազ Կարապետեան 40
- Մարտիկ, Աննա Ունանեան 100
- Ճորճ, Սիմէ Արմոնեան 100
- Սերոր, Գոճար Ունանեան 100
- Միքայէլա Միքայէլեանի** մահուան առթիւ:
- Ս. եւ Ս. Վիգէն Արրաճամեան 50

Ռեբեկա Արապեանի մահուան առթիւ:

- Ժան, Սոնիա Քէօղիկեան, զկը. 200
- Պարոյր, Գարոյիկ Գաղանձեան, զտըրք 200
- Լէնա, Սօսի Արապեան, զկը. 200
- Րօզի Գորամանեան, զկը. 200
- Արրաճաճ, Անահիտ Սվանեան 200
- Եղուարդ, Մարո Ֆրունձեան 30
- Վահագ, Մարալ Յովսէփեան 30
- Սարգիս, Զաքար Ասատուրեան 100
- Զրաշ, Յասմիկ Գաբարեան 30
- Ալպէր, Սոնա Պաշեան 20
- Յակոբ, Մովսէս Կուտեան 40
- Ս. եւ Ս. Ժիրայր Շատարեան 100
- Վարդան, Նայիրի Բարսիսեան 50
- Նորա Պարոնեան 60
- Տօրթ., Տիկ. Արմէն Ափրիկեան 200
- Ս. եւ Ս. Կիրակոս Էքմէքճեան 50
- Ս. եւ Ս. Պարոն Մանուկեան 50
- Ս. եւ Ս. Գէորգ Քէօսեան 50
- Ս. եւ Ս. Թադէոս Գաղանձեան 40
- Ս. եւ Ս. Տանիթ Թոպի 100
- Ս. եւ Ս. Զաք Սահակեան 100
- Ս. եւ Ս. Վիգէն Պասմանեան 40
- Ս. եւ Ս. Վահագն Եսայեան 25
- Փաթիլը, Նաթիշա Պաքոս 50
- Ս. եւ Ս. Նորայր Պէրճեան 30
- Ս. եւ Ս. Բարդէն Կարապետեան 100
- Ս. եւ Ս. Վիգէն Ֆրունձեան 100
- Գարապետ Մարգարեան 50
- Գօգօ, Սօսի Ասիկեան 100
- Յարութ, Սեղա Գասապեան 100

Իւրազին Սեղա Իսկէնեան 20

Բիւզանդ Թորիկեանի Հոգւոյն

Ս. եւ Ս. Վիգէն Ֆրունձեան 50

Գօգօյէ Աֆարեանի Հոգւոյն

Կարօ Մախարաբեան 40

Վարդգէս Այնթապեանի Ա. տարիկիցին

Արեգ, Բրիտիան, Գարին, Ալիք, Բարիսա Մարգարեան 200
- Արթիւ, Ալիս Մարգարեան 200
- Ս. եւ Ս. Սեբոստ Գոյմեան 100
- Ս. եւ Ս. Բարդէն Կարապետեան, ընտը. 100
- Թիֆլիսիցի ընտը. 100
- Սանտրու, Նաթիլի Տիփայմա 200
- Մարի Արշէլեան Ազգարեանի** մահուան (Լուս Անճըլա) 40-ին
- Ռուբէն, Շուշան, Յակոբ, Գարին Ալզարեան 100
- Կարպիս, Անահիտ, Թամար, Աւօ Գորանեան 100
- Իսաֆֆի, Փօլա, Մաթիոս, ձէնիքա Ազարեան 250
- Սեթր, Տիկ. Արմենակ Գաղանձեան, Մեկրեան 50
- Ս. եւ Ս. Կարօ Նոյսուտեան 25
- Ժողովք, Լուսամիկ Գարամանուկեան 20
- Բիթրը, Եփի Զատիք 20
- Վահէ, Պրեճուկ Զամբարձուեան 20
- Վահէ Քիշիշեան 50
- Գէորգ, Լիլի Տաղեան 30
- Ժողովք, Անայիս Թովթիկեան 50
- Վարդան, Նայիրի Բարսիսեան 50
- Աղատուհի ձուրեան 25
- Ս. եւ Ս. Ժիրայր Զաքարեան 50
- Ստառ Գարապետ 25
- Ս. եւ Ս. Վիգէն Յովսէփեան 50
- Յակոբ, Տիրուկ Մանկիեան 50
- Գէորգ, Արարիկ Օճանեան 50
- Ս. եւ Ս. Յարութիկ Արգիլանեան, զկը. 100
- Գէորգ, Նորա Գարրիկեան 50
- Րուբէն, Զուրիկ Արապեան, զկը. 25
- Դրօ, Աննա Փիլիկեան 100
- Յակոբ, Աստղիկ Գարապետ 30
- Մարիկ Մանուկ Արթիկի** 2-րդ տարիկիցին
- Փանոս Արթիկ 50
- Ազնիկ Մանկիկեանի** մահուան (Լիւրանեան) 40-ին
- Զրաշ, Քարօ, Սեւակ Զովորեան 25
- Ս. եւ Ս. Յակոբ Զովորեան 20
- Վահան, Մովսէս Տէր Օճանեան 20

Աղատուհի ձուրեան 25

Կարօ, Ռիթա Տէրաբեան, զկը. 20

Քննիման, Սոնա Սամուէլեան 10

Յակոբ Մակի Էլիճէքեան 20

Յակոբ, Տիրուկ Մանկիկեան 50

Յակոբ, Անուշ Դաղարեան, զկը. 25

Ժորճէթ Տապաղաբեանի 7-օրէքին Զրաշ, Քարօ, Սեւակ Զովորեան 25

Յակոբ, Անուշ Զովորեան 25

Յակոբ, Անուշ Զովորեան, զկը. 20

Յակոբ, Անուշ Զովորեան, զկը. 20

Յակոբ, Անուշ Զովորեան, զկը. 20

Յակոբ, Անուշ Զովորեան, զկը. 20

VILLAGE GREC

CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !



KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!



4491, boul. Samson, Chomedey, Laval • Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight



BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514
333-3000
DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5